

Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Է. — ՇԲԱՆ ԻԲ. 1890 ՏԱՐԻ ԻԿ. ՅՈՒԼԻՍ 31

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶՈՅՍ ՄԻՒՌՕՆԻ

Ներկայ 1890 տարւոյ Սեպտեմ. 30ին ի տօնի Վարագայ Ս. խաչի՝ ըստ յաջողելոյ Տեառն Ընտուծոյ՝ վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. ՄԱԿԱՐ մտադրեալ է Ս. Միւռօն օրհնել:

Ս. Միւռոնի օրհնութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրական արարողութիւններից առաջինն լինելով, վեհ. Հայրապետը բարեհաճեցաւ կանխաւ ի լուր ամենեցուն հրատարակել, որպէս զի ցանկացող բարեպաշտ հոգևորականք և աշխարհականք ըստ նախնի սովորութեան ի ժամանակին ժամանեն ի Մայր Աթոռս և վայելեն Ս. Միւռոնի օրհնութեան ընորհը:

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ՈՒՍԿԸ

Որպէս այր մի գնացեալ ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իւր՝ և ետ նոցա զինչս իւր։ Ումեմն երկուս, և ումեմն մի. իւրաքանչիւր ըստ իւրում կարի, և գնաց (Մատթ. ԻԵ. 14—15)։

Ի՞նչ կնշանակեն այն քանքարներն, որոնց մասին խօսում է այս առակում։ Այդեօք քանքար խօսքով պէտք է հասկանալ բոլոր շնորհներն, որոնք Աստուած տալիս է մարդոց ոչ հաւասար չափով, ինչպէս զորօրինակ առողջութիւն, բնական այժ, դրամական միջոցներ, յաջողութիւն, կրթութիւն, վերջապէս յաջող պայմաններ, որոնց հանդիպում է մարդս այն հասարակութեան մէջ, ուր նա ապրում է։ Թէ պէտք է հասկանալ այդ խօսքով լոկ հոգևոր շնորհներն, որոնք զանազան չափով իջնում են ամենայն բարեաց Սերմանողից, որին կվայելեն ամենայն փառք։ Ես կարծում եմ, եղբարք, որ թէ առաջին և թէ երկրորդ բացատրութիւնն օտոյգ է և ճիշդ, քանի որ նոքա միմանց չեն խրում, չեն հակասում։ Ես կարծում եմ, որ Յիսուս Քրիստոս այս առակն էլ նորա միւս բոլոր առակների նման, միաժամանակ լոյս է գցում թէ բնութեան և թէ շնորհքի թագաւորութեանց վերայ։ Այս ընդարձակ և մի կողմն ժամանակ ճիշդ մտքով, աշխատ կլինիմ ես քննելու, եղբարք, ձեր առաջ այս առակն, և սորա համար առաջիկայ երեք քննախօսութեանցս մէջ կխօսեմ նախ Աստուծոյ շնորհաց անհաւասարութեան մասին, ապա այն գործունէութեան մասին, որ Ձէրը պահանջում է մեզնից և վերջապէս այն հաշուի մասին, որ մենք պարտական կլինենք նրան տալ։

Այս առակի սկզբում իսկ մենք հանդիպում ենք մի գաղափարի, որ ջնջուում է մեր ժամանակի ամենատխուր և կիզիչ

խնդիրն, այն է՝ անհատասարութեան ծագման խնդիրը։ Ցիսուս Քրիստոս առանց տատանման, անհատասարութեան սկզբնապատճառ իրն Աստծուն է ճանաչում։ Նա նրան համեմատում է այն մարդու հետ, որ իւր կայքը բաժանում է անհատապաչխալ։ Ես լաւ գիտեմ, թէ որպիսի տրտունջ է յարուցանում մեր դարում այս վարդապետութիւնը. մեր ժամանակակիցներից շատերի հայեցակէտով արդարութիւնն և հատասարութիւնը նոյնանիշ են, այնպէս որ ան հատասարութիւնը նոցա աչքում անարդարութեան նշանակութիւն ունի։ Այսպէս, հարցն ինքն իրան մեր առաջ է գալիս. փորձենք ուսումն, եղբարք, նրան լուծել կատարեալ անկեղծութեամբ։

Առաջ առաջ տեսնենք, թէ ինչի մասին այս դէպքում Ցիսուս Քրիստոս լռում է։

ա, Նա չէ ասում, որ տէրը պակաս է սիրում այն ծառաներին, որոնց քիչ է տալիս։

բ. Նա չէ ասում, որ տէրն իւր գործողութեանց մէջ կամայականութեամբ է վարուում, ընդհակառակն Նա մեզ հասկացնում է, որ տէրը խոհեմութեամբ է վարուում, ըստ որում իւրաքանչիւր ծառային տալիս է ըստ իւրում կարի։

գ. Նա չէ ասում, որ անհատասարութիւնը չարունակուում է և փորձելից յետոյ էլ, այն է՝ երկրաւոր կեանքից դէնն էլ, երկու հատասարիմ ծառաներն էլ, որոնք նոյնս ինչքից հատասար բաժին չստացան, մի և նոյն վարձատրութեան արժանացան, «Ուրեք մնանեն յաւերժական տեսանն իւրեանց»։

Բայց առանց այս ամենի էլ, պէտք է խոստովանել, որ Ցիսուս Քրիստոս պարզապէս ասում է, թէ ինչպէս տէրը մի ծառային տուեց հինգ քանքարն, միւսին — երկու, իսկ երրորդին — մի, նկատեցէք, որ մի և նոյնը մենք տեսնում ենք և բնութեան մէջ։ Սորա մէջ ոչ մի տեղ չկայ կատարեալ հատասարութիւն, որովհետև անպայման հատասարութիւնն ոչ այլ ինչ է, քայց եթէ միահերսութիւնը և հէնց սա ամենից քիչ նկատելի է Աստուծոյ ձեռաց գործերի մէջ։ Հատաքեայէք հազար տերև մի և նոյն կաղնիից, համեմատեցէք նրանց միմեանց հետ և դուք

նոցա մէջ չէք գտնիլ մի զոյգ ոչ միայն ճիշդ նոյնակերպ, այլ և ոչ նման միմեանց իրանց ջիղերի պրոբեեամբ։ Միակերպ կրկնելում են միայն մարդու ձեռաց գործերը, ես խօսում եմ ոչ միայն մեր գործարանների արտադրութեանց մասին, որոնք միակերպ ձուլուում են միլիոնաւոր օրինակներ և կամ տպուում մրճի մի և նոյն հարուածով, այլ մինչև անգամ մարդուս հանճարի արտադրութեանց մասին, որոնց ազատ ներշնչութիւնը մեզ մի տեսակ աստուածային բան է թուում։ Մինչև անգամ Ռափայէլն ու Միքել Անջելոն էլ կրկնուում են և քննչի փորձուած աչքը հեշտութեամբ կարող է տեսնել նոցա եղանակը։ Սորան հակառակ բնութեան բոլոր թագաւորութեանց մէջ դուք տեսնում էք զարմանալի կարգ և այն բազմաթիւ շարքի իւրաքանչիւր անդամի մէջ կեանքն արտայայտուում է անընդհատ բազմազան ձևերով։ Որքան դուք կողմակերպութեան սանդուղով աւելի բարձրանում էք, այնքան էլ աւելի մեծ բազմազանութեան էք հանդիպում, ամենից ցածում, բիւրեղացուցման երևոյթներում, նկատուում է խիստ երկրաչափական ճշգրտութիւն, վերևը մարդուս մէջ — ազատ կամքի հաճոյք։

Բացի նրանից ես նկատում եմ, որ այս անհաւասարութիւնը ոչ միայն իրողութիւն է, այլ և ընդ նմին նա է ընկերական կազմ մարդոց մէջ, և որ նա պարտաւորում է նրանց միմեանց վերայ յենուելու, որովհետև նա՝ անհաւասարութիւնը, մարդոց փոխադարձ կախումն ունենալու հաստատութիւնն է։ Անպայման հաւասարութեան ժամանակ, իւրաքանչիւր մարդ, անշուշտ, ինքն իրմով կշտանար, կբաւականանար, բայց Տէրն այս չէր ուզում։ Նա մարդոց մէջ անհրաժեշտ կապ դրեց, ես պէտք է ուրիշի մէջ որոնեմ այն, ինչ որ ինձ պակասում է և միւսն, որ աւելի պակաս պարգևատրած է քան թէ ես, պէտք է ինձ վերայ յոյս դնէ։ Ոչ մի տեղ այս կախման ընորոշ գիծն այնպէս պարզ և քնքոյշ ձևով չէ երևում, ինչպէս ընտանեկան կեանքի մէջ, ինչպիսի նա միշտ պէտք է լինի, այս տեղ անհաւասարութիւնն ամենուրեք է և ամենուրեք էլ դրոյ-

մեմ է բազմազան յարաբերութիւնք գերդաստանի անդամոց մէջ, այր մարդուն պատկանում են սահեցող—շինող գործունէութիւնն և սկզբնաւորութիւնը, կնոջ—ըմբռնող և պահպանող ընդունակութիւնքն, երիտասարդութեան բուռն եռանդն և հասուն հասակի ոյժերը ծառայում են ծերունու թուլութեան և երեխայի անփորձութեան: Իշխանութիւնն և սրա հրամաններն այստեղ արտայայտուում են հազարաւոր մեղմ և քաղցր եղանակներով, ազդեցութեան, յարգանաց, խմաւորութեան, գթութեան, սիրոյ ձևերի ներքոյ: Փորձեցէք այն ամեն զանազանութիւնք—տարբերութիւնք յայտնի հատուկ ցնորքների մի մանկևայթի ներքոյ դնել—և դուք կտեսնէք թէ որպիսի արտաւնջ կ յարուցանէք դրանով: Ա յսպէս ուրեմն, սորա վերայ ուշք դարձրէք՝ թէ ամեն գերդաստանի, ամեն հասարակութեան հիմքն անհաւասարութիւն է:

Կհամաձայնիմ որդեօք դուք, եղբարք, ինձ հետ եթէ ես կանգ առնեմ սորա վերայ, յենուելով մի կողմից իմ ձևակերպած կանոնի և միւս կողմից փորձերի հեղինակութեան վերայ—և պարզապէս անեմ այն եզրակացութիւնը թէ անհաւասարութիւնն, իւր ամեն ձևերով, անսուտ իրողութիւն է, որոյ առաջ պէտք է ակամայ խոնարհիլ: Ես հաւաստի եմ, որ ոչ—չէք համաձայնիլ: Ընդհակառակը դուք կմեղադրէք ինձ Աւետարանի սիրալ մեկնութեան մէջ, նորա մէջ, որ ես նրան միակողմանի եմ բացատրում, ինչպէս մի փաստաբան առանի առաջ, և ոչ իբրև աշակերտ Յիսուսի Քրիստոսի և դուք հազար անգամ արդար կլինիք այդ դէպքում: Իրօք կայ ճշմարիտ օրինաւոր հաւասարութիւն, առ որ ձգտում ենք ամեն մեր ընտիր ոյժերով և ընդունակութիւններով — դա հաւասարութիւնն է մեր ապագայ վիճակում, մահից յետոյ: Դուք գիտէք, թէ Աւետարանն ինչպէս բացայայտապէս հաստատում է այդ հաւասարութիւնը՝ հարուստներն և աղքատներն, իմաստուններն և ագէտները, հզօրներն և թոյլերը — մենք բոլորս էլ փրկուած ենք մի արիւնով և կոչուած մի երկնային ժառանգութեան համար: Ա յս իմաստով Աստուծոյ համար չկայ տար-

բերութիւն անձանց մէջ, չի լինիլ ահեղ դատաստանի օրն և չպիտի որ լինի այստեղ էլ, երկրիս վրայ։

Բայց ղպշշ լինենք՝ այնպէս կարելի է յեղաշրջել այս իմաստն, որ հարկ կլինի նրանից խեռ և վրդովիչ եզրակացութիւն անելու. «քնարաք է, մենք համաձայն ենք բոլորովին, որ մահից յետ թագաւորէ կատարեալ հաւասարութիւն, միայն որ դուք ապահովեցնէք մեզ վայելելու այստեղ երկրիս վրայ խաղաղութեամբ մեր առաւելութիւնքը, մեր արտօնութիւնքը»։ Այսպէս կարելի է պաշտպանել կրօնն ու եկեղեցին աշխարհային կոպիտ շահերի առթիւ, որովհետև ըստ յայտնի շնական — առնամօթ արտայայտութեան՝ եկեղեցին ամենընտիր պահապանն է լի զեղուն անդուվներին։

Ես չեմ կամենում՝ եղբարք, դատել նորա մասին, որ մեր համաքաղաքացիներից շատերը, անհաւատ գոլով իրանց սրտերի խորքում, պաշտպանում են կրօնը հէնց այդ նպատակով։ Ես միայն կասեմ, որ նոցա հաշիւը սխալ է, որ նոքա այդպէս ոչ միայն չեն խաբիլ, որ ժողովուրդը նոցա դիտաւորութիւնը լոյս աշխարհ կհանէ և այնուհետև անտարբեր կլինի ամեն ծանր գործակցութեան համար. ժողովուրդը միշտ կյարգէ կրօնն, քանի որ սա հաւատի գործ է, բայց նա ատելութեամբ և անարգանօք կվերաբերուի դէպի նա, երբէք նրան կողմնակի նպատակների համար գործիք կգտնէնն և յայտնի բան է, այսպիսի դէպքում նա իրաւունք կունենայ։ Բայց ես բողոքում եմ նոցա դէմ, որոնք Աւետարանի վերայ իբրև այդպիսի չարագործութեան աղբիւրի վերայ կնայեն։ Հո մինչև անգամ օդից, որ պահպանում է մեր շնչառութիւնն ու կեանքը, կարելի է մահաբեր թոյն քաղել. ուստի և մի զարմանանք, որ Աւետարանի մէջ գտնում են իրանց անձնասիրութեան արդարացումն. աւելի լաւ է ասենք, թմրեցուցիչ թոյներ, որոնք քնեցնում են խիղճը։ Իսկ Աւետարանի իսկական իմաստը հակառակն է ցոյց տալիս և ես իսկոյն ձեզ այս ցոյց կտամ։

Ինչպէս արդէն ասացի, մենք ամենքս էլ հաւասար ենք մեր յաւիտենական վիճակի մէջ, մենք ամենքս հաղորդակից ենք

մի և նոյն սիրոյ, մենք ամենքս մի արիւնով ենք փրկուած և մի փրկութեան կոչուած։ Բայց այս բոլոր կնշանակէ, եթէ ոչ այն, որ իւրաքանչիւր մարդ, կատարելով Աւետարանի բոլոր պահանջածները, պէտք է ունենայ հաւասար իրաւունք իւր հոգեւոր փրկութեան համար։ Եթէ այս այսպէս է, թոյլ տուէք ինձ հարցնելու թէ, արդեօք ներկայ ժամանակուս բոլոր մարդիկ կարող են փրկուիլ։ Մրթէ հնարաւոր է այս — ես չեմ էլ խօսում հեթանոսների մասին, որոնք անգիտութեան խաւարի մէջ ընկղմած են — հնարաւոր է արդեօք այս այն միլիոնաւոր էակների համար, որոնք ընկճուած են տգիտութեան կամ չքաւորութեան ներքոյ։ Հնարաւոր է արդեօք որոշ շրջանում մարդկութեան մէջ պահպանել հոգին և մարմինը։ Մրթէ ազգաւորութիւնն և տգիտութիւնը չեն համնում այն աստիճանին, որ միգով պատեն խիղճն, ինչպէս արբեցութիւնը խաւարեցնում է միտքը։ Մրթէ չկան այնպիսի հասարակական վիճակներ, որոնց մէջ ամենից հաստատամիտ մարդն էլ սահում է և վայր ընկնում, ինչպէս մի տուլեակ, շեղ մակերեսոյթի վերայ։ Մրթէ չկան մշակների բնակարանաց այնպիսի նիւթական պայմաններ, որոնցից ղեղխութեան գարշահոտութիւնը բուրում են և վարակում են այնտեղ հաւաքուած մարդոց աւելի շուտ, քան այն զարհուրելի հոտի բակտերիաներն, որ նոքա շնչում են։ Դէպի ձեզ եմ դառնում, ով մայրեր, մրթէ դուք կհամաձայնիք, որ ձեր քնքոյշ, սիրելի զաւակը մի օր, մի ժամ ներկայ գտանուէր այդ տեսարաններին և խօսակցութեանց, այդ անբարոյական մթնոլորտում, որոյ մէջ աճում են հազարաւոր մանուկներ, որոնք ընդունակ են ձեր որդոց պէս, հասկանալու ամեն ինչ, որ բարի է, մեծ է և տուրբ։ Եւ ահա այս պատճառով ես հաստատում եմ, քանի որ կան այսպիսի իրողութիւնք, քանի որ անհաւասարութիւնն արտայայտուում է այդպիսի զարհուրելի ձևերով և ներկայացնում է այդպիսի սարսափելի տեսարաններ, մենք չպէտք է լինենք, մենք չենք համաձայնել նորա կուսակիցը լինել։ Ընդհակառակն, պէտք է դաւենք այս մասին, պէտք է, որ Աւետարանը յանդիմանէ մեզ և ըս-

տիպէ մեզ այդ մասին։ Պէտք է, որ կրօնն, որ ծոյլի համար գլխի բարձ չինել են դանկանում, դառնար ճակոյղ փուշ, որ մեր խիղճը միշտ արթուն վիճակի մէջ պահպաներ։ Հարկաւոր է, որ մեր քարեկեցութեան, մեր թեթեւամիտ և ճոխ ղուարճութեանց, մեր բոլոր գուշէ և արդարամիտ, բայց, դժբաղդաբար, ողորմելի և ինքնասէր կենցաղավարութեան ժամանակ, մենք մեծ Վարդապետի այս խօսքերը յիշենք. «Ջաղցած էի և դուք չկերակրեցիք ինձ, ծարաւի էի — և դուք չխմեցրիք ինձ, մերկ էի և չհագցրիք, հիւանդ էի և չայցելեցիք ինձ, հեռացէք ինձանից, անիծեալք»։

Այսպէս ուրեմն, մեր ապագայ, մահից յետ ունենալիք վիճակի հաւասարութեան հաւատը պէտք է մեզ դրդէ հաստատամտութեամբ մարտնչելու ժամանակակից կեանքի ամեն անկարգութեան դէմ, որ վնասակար կերպով ազդում է մեր մերձաւորների բարոյական կեանքի վերայ, մարտնչելու եւ աղքատութեան ու տանջանաց ամեն ծայրահեղութեան դէմ, որոնք ենթարկում են նոցա հոգին այդպիսի ակնյայտնի վտանգի։ Նա արժանի չէ քրիստոնէի անուան, ով որ իւր եղբօրը թողնում է բարոյական սարկաւթեան և ստորութեան մէջ, որոյ անխուսափելի հետևանքը բարոյական անկումն է։

Այսպիսի լուսաբանութիւնից յետոյ (իսկ դուք տեսնում էք, որ այդ անհրաժեշտ էր) մենք տեսնում և պարտական ենք ընդունելու, «մէկին — հինգ քանքար, միւսին — երկու, երրորդին — մի» խօսքերը։ Այսպէս անհաւասարութիւնն միևնոյն ներկայ ժամանակս եղել է և է իրողութիւն, որ Աստուած չէ մերժում։

Այս ի նկատի ունենալով մենք ի՞նչ պէտք է անենք, կարելի է ընդունել անհաւասարութիւնը քանի որ նա չէ շօշափում խիղճդ, ընդունել նրան աշխատելով միջոցներ որոնել նրան ահմանափակելու և մեղմացնելու համար, բայց և այնպէս ընդունելով նրան խոնարհութեամբ, անտրտունջ և արիութեամբ։ Թող դու լինիս աղքատ, թող դու լինիս մշակ կամ ծառայ, թող դու չլինիս այս աշխարհիս արտօնեալներից մէկը, և դու

ԾԻՍԱՐԻՐԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ Ի ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻՒՆ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ՝ ՎԱՍՆ ԿԱԹՈՂԻԿՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ - ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՀԱՅՈՑ.

ՄԱԿԱՐ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑԵՑ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱՔՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ,

Յօրէ բացման եկեղեցական - ծխական ուսումնարանաց Հայոց հոգալ հոգւոյք զաւրեկարգութենէ նոցին և հնարս խնդրեաք ածելոյ զնոսա ի վիճակ ցանկալին յառաջադիմութեան և յարատև պահպանութեան։ Ըստ այսմ և կամ եղև մեզ յանցելումն ամի, զկնի կարևոր փոփոխութեանց, առ առաջնորդացդ Հայոց յանուանէրիւր ի հրահանգութիւն զկանոնս եկեղեցական - ծխական ուսումնարանաց մերոց, յորս և որոշեցաք զսահման պարտուց և վիրաւանց իւրաքանչիւր սերոց ի պաշտօնէից և զեպանակ կառավարութեան ուսումնարանացն։ Ի կանոնին յայնմիկ նախ սահմանեցաք զկարգ ընտրութեան և զհաստատութեան ուսուցչաց և դպրուցհսեաց ըստ յօդուածոցն 41—46· և յետ պատրաստելոյ զընդհանուր

ցուցակ անձանց ընտրելեայն ի պաշտօն ատենադպրութեան, հրամայեցաք վերիվ ըստ ժամեանցն Համաձայն կանոնաց և հրահանգութեանց մերոց՝ ընտրելով զպաշտօնեայսն ի ցուցակէ առաւել և այն՝ որոնք զգաստ նախանձուրդութեամբ ի մի չընթացան ժամանակաց նուիրականն գործ դատաստանական վանականց եկեղեցւոյ անկի ի ձեռս անպատանեաց և թերուսաց անձանց։ Որպէս ի նմանին յայտնաւորեալ մեր ի կարծիս հոգ յանձին կալաք առնել զնոսա ընտրութիւն անձանց արժանաւորաց և յետ վերատին առաքելոյ ի տեղեկութեանց անտի զտեղեաց առ մեզ ըստ օրինութեան նախկին կնպատակաց մերոց՝ արձակելոց առ ձեզ հրամանիցեցաք քառնալ

յընդհանուր ցուցակէ անոի գկարգան «Զ», «Է» և «Ը», քացառութեամբ սակաւաթիւ ընտրելոց ունանց, որոց և ընտրհեցաք ուսումնութիւն շարունակելոյ զպաշտօն ուսուցչութեան յեկեղեցական-ծխական ուսումնարանս մեր։ Արդ՝ յանձն ուրարեալ ձեզ վերակազմեալն զայն ցուցակ, պատուէր հրամանի կնքեմք ձեզիւ հետևիլ ցուցմունս յիշատակեալ կանոնաց մերոց և ընդհանուր ցուցակին՝ հաստատելոյ ի մեզ։ եւ զորս յանգելուամ ամի ուսիպմամբ հարկին ի յարգանս միջնորդութեան ունանց ի ձէնջ հրամայեցաք կարգել արտաքոյ ընդհանուր ցուցակին ի պաշտօն ուսուցչութեան եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց, թէ զեկեղեցականս և թէ զաշխարհականս ի զանազան դասակարգաց, եթէ չիցեն մուծեալ ի վերակազմեալս յայս ցուցակ, արձակել աներևին և պատուիրել նոցա, եթէ կամիցին յարատևել ի պաշտամանն, խնդրամատոյց լինել յանուն մեր ըստ սահմանեալն կարգի։

Յամենց հետէ հաստ եղեալ է մեր և գիտեմք հաւաստի, զի ընթացք յառաջադիմութեան ուսմանց և բարոյականն գաստիարակութեան յեկեղեցական-ծխական ուսումնարանս մեր, կախեալ է առաւելապէս զվիճակէ անոի գաստիարակաց, ուսուցչաց ասելք և ուսուցչուհեաց, որք կարգեալ լինին ի պաշտօն առանձին իմն պայմանախոստութեամբ ընդ հոգաբարձութեանցն. յորմէ յերևան գան անտեղի ոսկարկութիւնք և յատկապէս նշանակութեան ուսուցչաց, և այ և որ մեծն է քան զամենայն՝ ձգտումն ամենայն ուրուք յուսուցչաց և յուսուցչուհեաց յայնպիսի տեղիս պաշտօնավարութեան, յորս կարիցեն շահիլ թոշակս ցանկալիս անձանց իւրեանց, ըստ այսմ և ուսումնարանք՝ ճոխացեալք արդեամբք մուից, առ ի գտանել ի պաշտօն զարժանաւորագոյնսն յուսուցչաց՝ սահմանեն քանակս թոշակաց առաւելագոյնս, քան որք ի սակաւաձեռն արդեանց անոի լցուցանեն զպէտս ուսումնարանաց. առաի յառաջանան յաճախակի տեղափոխութիւնք ուսուցչաց, որ գլխաւոր պատճառն է խանգարման կանոնաւոր ընթացից ուսման։ Առ ի առնուլ զառաջս այսպիսեաց անպատեհութեանց՝ մեք 33-րդ յօդուածով կանոնաց

մերոց սահմանեցաք, զի հոգարարձուք ի մատնելն ի վարուժն պաշտամանն՝ կազմեսցեն՝ զնախահաշիւ ծնօտակարարութեան տարեկան ծախուց առ եռամեայ ժամանակն պաշտօնավարութեան իւրեանց և յետ ընդունելոյ զհաստատութիւնն այնորիկ՝ վարեցին ըստ ամենայնի համաձայն այնր նախահաշուի. իսկ 39-րդ յօդուածովն թողաք ի ձեռս հոգարարձուացդ գիրս ուսմանելոյ զթուականէն պաշտօնէից հաստատութեամբ առաջնորդի, հայեցեալ ի գրամական կարզութիւնն իւրաքանչիւրոց յաւուս մնալոցն: Այն ինչ ակն ունեաք, թէ այսոքիւք հրահանգութեամբք մերովք անխոտոր ընթանալ համօրէն հոգաբարձութիւնք ի բարեկարգութիւն և ի պայծառութիւն եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց, յաւ ի սիրտ հաստատի եղեալ ծանեաք, զի ի տեղիս տեղիս, որպէս ի քաղաքս՝ նայնպէս և ի գիւղօրայս, հոգաբարձութիւնքն, անգիտանալով թէ յիրսխեսոյ ինչ պատճառանաց, անցեալ ղանցեալ են զկանոնաւս և բազումք իսկ անձեռնհասաբար լեալ են ի կազմուժն յիշեալ նախահաշուի: Արդ՝ կամելով մեր գիւրութիւնս ընծայել գործոյն յաւաջագիմութեան եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց, հրամայեցաք կազմել զգուշական ուսուցչաց և պաշտօնէից և տարեկան թուշակաց նոցին յիւրաքանչիւր եկեղեցական-ծխական ուսումնարանս, զորս և յանձնեալք ձեզ ի գործադրութիւն: Ցուցակքն այնոքիկ յորջորջեալք «կապար առաջին և երկրորդ» նահանեն զկարգ ուսուցչաց և զքանակ տարեկան թուշակաց նոցին յերկուս վիճակս, ուսումնարանք, որք ծախացեալք են տարեկան մոխրք արպեանց, պարտին վճարել ուսուցչաց կամ ուսուցչուհեաց կրօնի, լեզուի հայոց, լեզուի ռուսաց և ձեռագործութեան քսանական բուբլիս առ ժամն, ուսուցչաց կամ ուսուցչուհեաց թուաբանութեան, բնագիտութեան, երգեցողութեան, վայելչագրութեան և գծագրութեան տասն և հնգական բուբլիս առ ժամն. այս է կապարն առաջին: Իսկ ուսումնարանք, որք շատացեալք են սակաւաձեռն արպեամբք մոխիր, հատուսցեն ուսուցչաց կամ ուսուցչուհեաց կրօնի, լեզուի հայոց, լեզուի ռուսաց և ձեռագործութեան տասնևհնգական բուբ-

լիս առ ժամն և ուսուցչաց կամ ուսուցչուհեաց թուաբանութեան, քնագիտութեան, երկրագործութեան, վարչչագրութեան և գծագրութեան առանձական րուբլիս առ ժամն. այն է կոպան երկրորդ։ Ըստ այսմ երիցի մատակարարութիւն թաշակաց յամենայն յեկեղեցական ուսումնարանն մեր, յանելով ի տարեկան թաշակ այնոցիկ ուսուցչաց կամ ուսուցչուհեաց, որք ընտրեալ լինին յաստգութիւն յերիգամեան ուսումնարանն՝ երկու հարիւր րուբլիս և ի միգամեանն՝ մի հարիւր րուբլիս. իսկ ուսուցչաց կամ ուսուցչուհեաց՝ կարգելոց ի վերակացութիւն՝ յերիգամեանն ոտղայոց յինանական րուբլիս, յերիգամեանն օրիորդաց մի հարիւրական րուբլիս, ի միգամեանն ոտղայոց յինանական րուբլիս և օրիորդաց՝ եօթանասուն և հնգական րուբլիս։ Յանձն առնելիք գործոյս ուսուցչութեանդ հոգալ զպարժանն, զի յամենայն նախահաշիւս հոգալարձութեանց եկեղեցական-ծխական ուսումնարանաց վիճակիդ մուծցի կոպան առաջին և ի դէպս անհնարաւորութեանն միայն նուիրեալ նոցա կոպան երկրորդ։

Առ ի նպատակել յարատև պահպանութեան ուսումնարանաց մերոց յորդոր ի հոգալարձութեանց և աւագ ուսուցչաց կամ ուսուցչուհեաց ի տեղիս տեղիս ուր առկաւ ձեռն են արդիւնք մանից, պահպանել ուսումնարան, բաժանմունք որոց միացեալք են ի միում դասարանի ըստ հետևելոյն. մարթ է միաւորել ի միում դասարանի զերիս բաժանմունսն Ա. Բ. Գ. ի գումար դասուց 26 ըստ ձևոյն Ա. ի ձեռս մոյ և եթ ուսուցչի, որ ձեռնհաս իցէ մատակարարել զամենայն հնգամունսն երից միացեալ բաժանմանց։ Ըստ նմին օրինակի մարթ է միաւորել և զԴ. և զԵ. բաժանմունսն ի միում դասարանի ի գումար դասուց 30 ի ձեռն մոյ և եթ ուսուցչի, որ ձեռնհաս իցէ մատակարարել զամենայն ուսմունս երկուց միացեալ բաժանմանցն։ Ի դէպս բազմութեան աշակերտելոց Ա. բաժանման մարթէ միաւորել զԲ. և զԳ. բաժանմունսն ի միում սենեկի ի գումար դասուց 26 ըստ ձևոյն Բ. ի ձեռն մոյ և եթ ուսուցչի, որ ձեռնհաս իցէ մատակարարել զամենայն ուսմունս երկուց միացեալ բաժանմանցն։ Իսկ ի դէպս կարի սակաւութեան աշակերտելոց՝ մարթ

է շահանալ միով և երի բաժանմամբ ըստ ձևոյ Գ. ըստ պահանջից կրթութեան աշակերտելոցն. այն է՝ առաջին բաժանմամբն սերոյն, երկրորդաւն՝ սերոյն և երրորդաւն՝ սերոյն, առնելով նոյ ընդունելութիւն աշակերտելոց յերկրորդումն կամ յերրորդումն ամի։

Ըստ օրինակի բաշխմանդ այդորիկ եղիցի և մատակարարութիւնն դասուց և թոշակաց ի զսեղընթացն մէն ամի բաժանմանն։

Ցեկեղեցական - ծխական ուսումնարանն, որք կամիցին ի պատճառս առաւելութեան արդեանց առնել արտակարգ մատակարարութիւնս թոշակաց, պատուիրեմք Գերապատուութեանդ տալ նոցա հրահանգութիւնս, ըի կազմեսցին դնել խագիծ առանձին կոպարի, որոշմամբ յականէ յանուանէ անձանց, զորս կամիցին ընտրել ի պաշտօն և քանակի թոշակաց, զորս կամիցին առնմանել առ ժամն իւրաքանչիւր և առաջի արասցեն ընդ ձեռն ձեր ի նկատողութիւն մեր և ի հաստատութիւն։

Խաւիւ պատուիրեմք Գերապատուութեանդ՝ գուն գործել յաւելուլ զթիւ վիգասեան և երկդասեան ուսումնարանաց ի կանոնաւոր ամբողջութեան նոցին, և եթէ հնար է, իսւսափել ի բազմացուցանելոյ զթիւ ղուգընթացից բաժանմանցն ի միում և ի նմին ուսումնարանին։

Սեպուհ պարտ անձին լիցի իւրաքանչիւր ումեք յառաջնորդացդ՝ յորդոր լինել ժողովրդականաց և հոգեբարձութեանց քանալ յիւրաքանչիւր քաղաքս առ եկեղեցեօք երկդասեան և վիգասեան ուսումնարանս՝ ի լրումն պիտոյից քազմաթիւ թաղականաց երկուց սեռից. Հարկ անհրաժեշտ դնեմք ի վերայ առաջնորդացդ օժանդակել բացման և պահպանութեան յիւրաքանչիւր վիճանորդութեան գէթ միոյ միոյ երկդասեան ուսումնարանի լիակատար թուսով բաժանմանց վասն երկուց սեռից, գիտելով քաջ՝ ըի պահպանութիւն այդպիսւոյ ուսումնարանի մեծապէս նպաստիցէ կրթութեան հայերամ՝ մանկանց ի կրօնի և ի լեզուի հայոյ և քարգաւաճման թեմական դպրոցաց մերոց և հոգևոր ձեռնարկի, որք առանց կանոնաւոր զարգացման եկեղեցական-

ծխական ուսուժնարանաց մերոց ուղին ընթանալ ի թերութեան և յանկատար վիճակին։ Ըստ հաւատոյ անեղեռնութեանց՝ մատուցելոց մեզ ընդ ձեռն ձեր, գիտեմք՝ զի աղբիւրք եկեղեցական արգեանց մնատակարարին եկեղեցական-ծխական ուսումնարանաց մերոց գումարս աւաւելագոյնս, քան զնշանակեալն ի յիշատակեալ կոպարսն։

Ակներև է ապաքէն զի բացակայութիւն կանոնաւոր և լիակատար կազմակերպութեան երկդասեանն եկեղեցական ուսումնարանաց երկուց սեռից, թէ ի փոխանորդութիւնս և թէ ի բազմահայ քաղաքս և յաւանս վիճակաց ձերոց է արգասիք անկոպար տնտեսութեան արդեանց եկեղեցականաց. ուստի և ցաւ ի սիրտ տեսանեմք զբազմաթիւ երամս մանկանց երկուց սեռից անխնամ յուսման և դաստարկաշրջիկս։ Աւաջնորդացդ է գործ դիւրութիւնս ընծայել ժողովրդականաց առ ի լնուլ զպէտս նորահաս սերնդոց, վասն որոյ յեթ կազմակերպելոյ գէթ զմի մի երկդասեան ուսումնարանս վասն երկուց սեռից, պատրաստիցեն, ի տեղիս՝ որ բազմաթիւ են եկեղեցիք հայոց ի միւսմ վայրի, յայնպիսիսն յանուն մի եկեղեցւոյն բանալ ուսումնարանս միդասեանս կամ որիշ որիշ բաժանմամբ և կամ միացեալք։ Որ ինչ առ ուսումնարանս գիւղօրէից, ուր չիք հնար պահպանելոյ զայնպիսիկ լիակատար թուոյ բաժանմանցն, յանձն առնեմք Գերապատուութեանդ անօրինել, զի կազմակերպութիւն ուսումնարանացն եղիցի միացեալ բաժանմամբ։

Հուսկ ուրեմն՝ պատուէր հրամանի առանդիմք Գերապատուութեանդ՝ ամենայն արթնութեամբ հսկել ի վերայ ամենայն գործոյութեանց հոգաբարձութեանց և մանկավարժական ժողովոց, ընտրելոյ ընդ ձերոյ անմիջական պատասխանատուութեամբ ի նախագահութիւն հոգաբարձութեանց և յաւագ ուսուցչութիւն զանձինս՝ հաստատեալս մտօք և բարուք, հաւատարիմս կոչման իւրեանց, զարդարեալս քրիստոնէական ջերմեռանդութեան վարուք. առաւելապէս փոյթ կալչիք յընտրութեան անդ աւագ ուսուցչաց և աւագ ուսուցչուհեաց հայիլ ի մանկավարժական հմտութիւնս ընտրելեաց և ի հեզահամբոյր բարս բնութեան նոցին։

Տնօրինեսջիք յանձն առնել նոցա ժամն պատուց ոչ առնուել քան զ24 և ոչ նուազ քան զ18, յատկացուցանելով զպակասորդն կոպարատոր դատուց ամարկայի նորին այլուամ ումեք յաւուրցչաց, նշանակելոց ի կոպարին, և միմիայն ի կարի բացառական դէպս ներեսջիք կարգել զայլ ոք արտաքոյ քահանայութեան անձանց կոպարին և այն՝ ոչ առնուել քան զմի անձն:

Եւ եթէ հնար իցէ, ընտրեսջիք յաւուր ուսուցչութիւն զարժանաւորագոյնն ի քահանայից՝ մտելոց յընդհանուր դուռն, յատկացուցանելով նոցա զդասս և եթ կրօնի:

ՄԱԿԱՐ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուեալ ի վեցերորդ ամի Հայրապետութեան մերոյ
ի 10-ն յունիսի 1890 ամի Փրկչական
և յազգային Թուականութեան ՌՅԼԹ.

Թիւ 233.

Ի Սուրբ Էջմիածին

ունենալ միայն երկու գոյէ և մի պակասը։ Ինչ վնաս, մի-թէ այդ պատճառով Աստուած քեզ պակաս է սիրում։ Մի՞թէ դու անմահ հոգի ունեցող մարդ չես, երկնաւոր Հօր որդին չե՞ս։ Մի՞թէ քո կեանքդ նուազած է կամ աւորացրած։ Ո՛հ, այդ երբէք մի ասիլ, մի աւորացնիլ քո արժանիքդ, իբրև մարդ և քրիստոնեայ, այլ նայիր քո կեանքիդ վերայ և տես նրան, նորա յաւիտենականութեան բոլոր մեծութեամբ։ Մտածիր, որ եթէ դու ծառայում ես, քեզնից առաջ ծառայել է և չարչարուել Աստուծոյ Որդին Յիսուս Քրիստոսը, մեր Հոգեւոր Տէրը, մտածիր, որ նորա ձեռքերն, որոնք օրհնում են այժմ մարդկութիւնը, օտար չէին աշխատանաց, մտածիր, որ մենք մեր ճշմարիտ ազնուութիւնն ու արժանիքը պարտական ենք ժողովրդեան այնպիսի գործակիցներին, որպիսիք էին Պետրոս, Անդրէաս Փիլիպպոս, Յակոբոս, որ այն ժամանակից, երբ Քրիստոս փրկեց մարդկութիւնը, սրան ծառայելով և սորա համար տանջուելով, չկայ մեծութիւն և փառք աւելի երկարատև և ճշմարիտ քան այն, որ ձեռք է բերուում ծառայութեան և զոհաբերութեան միջոցով։

Բայի սրանից մի այլ մտածմունք էլ պէտք է տանջի այն սրտանջանաց, որ պատրաստ է քո շրթունքներից դուրս թռչելու, այդ է մտածողութիւնն Աստուծոյ իմաստութեան մասին։

Տէրը չունի յողդողդութիւնք, նա միշտ հաստատուն է ինքեան, նա յաւիտեան արդար է և բարի։ Նա չունի ոչ շեղումն և ոչ էլ փոփոխականութեան ստուեր անգամ, իսկ թէ նա սրսիսի կանոնով տալիս է իւր շնորհները, այս Յիսուս Քրիստոս ցոյց է տալիս «Իւրաքանչիւրին ըստ իւրում կարի» խօսքերով։ Տէրը ստեղծեց մեզ, իւր բարութեամբ, ոչ միանման, ուստի և մեր ոյժերն էլ տարբեր պիտի լինեն։ Այժ խօսքով այստեղ չպէտք է հասկանալ լոկ հոգեւոր կարողութիւնքն, ակնյայտնի է, որ այստեղ խօսքը գլխաւորապէս բանական ոյժի, կեանքի այս կամ այն բեռը տանելու ընդունակութեան վերայ է։ Հէնց այստեղ մենք հակամիտ ենք անձնատուր լինել

լոյս անհեթեթ ցնորքների մեր անձի վերաբերութեամբ։ Եթէ ազիւն առնք, մենք ունենք բաւական ճիշդ գաղափար մեր մտաւոր ընդունակութեանց վերայ, մենք չենք ձեռնամուխ լինել այնպիսի գործի, որ մեր հասկացողութիւնից անշուշտ բարձր լիներ և չենք լինիլ այնքան անձնապատուհան, որ մոռանչենք որ և է բարձր պաշտօն ստանձնելու վերայ, որ համապատասխան չէր մեր զարգացման. բայց կունենանք արդեօք այնքան բարոյական ոյժ, որ կանգնենք յաջողութեան, երջանկութեան և մեծութեան բարձութեան վերայ. ահա այս մենք բնաւ չգիտենք գործել, թէև ամենայն ցանկութեամբ ձգտում ենք թէ պէսպէս առաջինել, թէ գէպի երկրորդն և թէ գէպի երրորդն։ Այս տեղ ինձ մի հանգամանք զարմացնում է. հէնց այն անձինք, որոնք հասարակական ասպարէզում իրանցից բարձր դիրք ունեցող անձանց ամենից ուժի խստութեամբ քննադատում են, անշուշտ իրանք ամենից պակաս ընդունակ են նրանց փոխարինելու։ Նախանձոտ աղքատները, հարստութիւն ձեռք բերելով, կդառնային ամենագոռոզ հարուստներ, դիւրագրգիռ փառասէրները յաջողութեան ժամանակ կդառնային ամենախստասիրտ մեծատուններ և միջակ վիճակի հրապոյրների մէջ խարխափողները ի վերջոյ կշլանային բարձր բաղդի փայլից։

Ուման էք հաւատում, եղբարք, անմիտ կուռքին, որոյ անունը—դէպք, պատահմունք է, թէ Նախախնամութեան, որ ձեր վիճակի կարգաւորութեան մասնակից է։ Եթէ դուք հաւատում էք, որ Աստուած, չնայելով իւր բոլոր մեծութեան, հոգում է ձեր վերայ, որ նա իւր ոչ մի արարածին չէ արհամարհում, որ դէպի ձեր բարիքը ամենևին անտարբեր չէ նա, որ իւր որդուն ուղարկեց ձեր մեղայ քաւութեան համար, ուրեմն դուք պէտք է հաւատաք ու խոստովանէք և այն, որ նա իւր խնամատարութեամբ ձեզ դրել է հէնց ձեզ յարմար վիճակի մէջ, որովհետև ձեզանից լաւ գիտէ, թէ որքան են ձեր ոյժերն և ինչ կարող է ճնշել նրանց։

Անշուշտ ինձ կնկատեն, որ ես այսպէս քարոզում եմ կրաւորական հնազանդութիւն, որ ես իւրաքանչիւրին իւր վիճակին

սարկացնում եմ, դնելով նրան մի նեզ շրջանի մէջ, որ իբրև թէ գծել է Նախախնամութեան աջը, որ ես ձգտում եմ ճնշե-լու ամեն փառասիրութիւն, ուրեմն և ամեն յառաջադիմու-թիւն, որ այս վերջի ի վերջոյ կհասցնէ մեզ դասակարգական կազմակերպութեան պետութեան մէջ: Բայց այդպիսի բացա-տրութիւնը կլինի իմ քարոզածիս իմաստի չեղաշրջումն: Ես բնաւ մտադիր չեմ քարոզելու ճակատագրական հնազանդու-թիւն, ընդհակառակն, ես կարծում եմ, որ քրիստոնէական վարդապետութիւնն ամենից առաջ պարտք է դնում բոլոր-ցունցս վերայ, որ յառաջադիմենք, ձգտենք զարգացնելու մեր բոլոր ընդունակութիւնքը և ինքը հզօրապէս առաջնորդում է մեզ դէպի յառաջադիմութիւն: Մինչև իսկ համամարդկային յառաջադիմութեան գաղափարն առաջին անգամ ծագեց մարդկութեան մտքում հէնց քրիստոնէական գաղափարից երկնային սրբազանութեան մասին: Ուստի և բնաւ զարմանալի չէ, որ իւրաքանչիւր ոք աշխատում է առաջ երթալու այն հասարակական ազատ կազմակերպութեան շնորհիւ, որպիսին գոյութիւն ունի մեր ժամանակում: Բայց և այնպէս ես կար-ծում եմ, որ աւելի բարձր դիրք բռնելու համար պէտք է ու-նենալ որոշ, ամենքի համար նկատելի ընդունակութիւնք: Ես կարծում եմ, որ եթէ Տէրը տուել է այսպիսի ընդունակու-թիւնք այս կամ այն մարդուն, նա այնպէս ակն յայտնի կերպով ցոյց կտայ նրանց, որ ոչ մի երկրպագութեան տեղիք չի մնալ: եթէ դու ունես ականջալսութիւնք—ցոյց տուր նրանց— և ամեն ինչ վերջացած է, իսկ եթէ դու չունես նրանց, շնոր-հակալ եղիր Աստուածմէ, որ նա դրել է քեզ այնպիսի վիճակի մէջ, որ չէ կարող քո գլուխդ շրջել, հաշտուիլ քո վիճակիդ հետ և մի որոնիլար, որ քեզ միայն երկու տալանդ է տուած:

Միայն Աստուած գիտէ մեր երկրաւոր անմիտ ցնորքներն, որոնք վտանգութեան և ունայնասիրութեան արդիւնք են, ցնորք հարստութեան, բաղդաւորի սիրոյ վերայ, գուցէ մինչև ան-եամ ցնորք յանցաւոր կրքերի բաւարարութեանց կամ զղուելի

ու ամօթալի զուարճութեանց մասին։ Ո՛չ, եթէ մեր բոլոր ձգտումները խօսելու ընդունակութիւն ստանային, ով գիտէ որպիսի սխալ խոստովանութիւնք մենք կլսէինք։ Բայց չեմ խօսիլ դորա մասին և կբաւականանամ միայն մի հարց տալով։ Եթէ քո ինդիրներդ ու աղօթքներդ լսուէին և դու ստանայիր, չեմ ասում հինգ, այլ հարիւրապատիկը արդեօք Աստուծոյ առաջ, քո ոչնչութիւնդ խոստովանելով։ Կաղօթէիր արդեօք յերմեռանդութեամբ, խնդրելով Տիրոջից ողորմութիւն։ Կմոռանայիր արդեօք դու յաւիտենականութեան վերայ, կընթանայիր արդեօք աչ ուղիղ ճանապարհով։ Ոչ վիշտ, ոչ քեկեալ յուսոյ նեղութիւնն, ոչ խարէութիւն, ոչ սուգ, ոչ կարիք ճանաչելով ու տեսնելով, դու արդեօք կմերձենայիր նրան, որ ասաց. «եկայք առ իս ամենայն վաստակեալք և ծանրաբեռնեալք, և ես հանգուցից զձեզ»։ Մի խօսքով կլինէիր արդեօք դու ճշմարիտ քրիստոնեայ, կփրկէիր արդեօք դու քո հոգին։

Այսպէս քանքարները բաժանուեցան—ապա ի՞նչ է ասում առակը։ Ասում է, թէ տէրն խնդալն գնաց։ Միայն այստեղ չէ, որ Յիսուս գործ է դնում դիմաւորինակ ոճ, ցոյց տալու համար, թէ ինչպես է վարուում Տէրը մարդկութեան վերաբերմամբ երկրաւոր գոյութեան այն փոփոխման մէջ, որ մենք կոչում ենք համաշխարհական պատմութիւն։ Ի՞նչ է կամենում Յիսուս Քրիստոս սրանով ասել։ Թէ Աստուած բացակայ է։ Բայց կարող է արդեօք նա թողնել իւր արարածին։ Մինչ Յիսուսի Աստուածն էլ նայենք է, ինչ որ է Դեկարդի Աստուածն, Դեկարդի որ Պասկալի կարծիքով, ընդունեց Աստուածոյ գոյութեան կարծիքն, իբրև մի զօրութեան, որ ուրեմն տուեց առաջին հարուածը շարժման և ապա յանձնեց նրան բնական օրէնքների իշխանութեան։ Չգուշացէք այդպէս մտածելուց։ Յիսուս Քրիստոս աւելի քան ոք և իցէ խօսել է Աստուածոյ և աշխարհի մէջ եղած անմիջական և անուսա կապի մասին։ Յիշեցէք նորա պարզ և ընդ նմին հիանալի խօսքերն երկնից թռչունների և

դաշտի շուշաններուն մասին, որոնց Աստուած կերակրուած է և հագցնուած այնպիսի գեղեցիկ զգեստներ, որպիսիք չէ հագել նոյն իսկ Սողոմոնն իւր բոլոր զօրութեամբ և փառքով։ Եթէ Յիսուս Քրիստոս այստեղ Աստծուն համեմատում է բացակայ աիրոջ հետ, այս կնշանակէ, որ Տէրը յիրաւի մեզ բացակայ է թուում։ Նա հաղորդութիւն ունի մեզ հետ ոչ թէ անմիջապէս, այլ կողմնակի կերպով։ Նորա և մեր մէջ գոյանում է այն, ինչ որ մենք կոչում ենք բնութեան օրէնքներ, այսինքն որքան մենք կարող ենք երևակայել և մեզ ներկայացնել նրանց իբրև Ստեղծչի արարչական միաքն, որ գոյութիւն ստացել է ժամանակի և տարածութեան մէջ։ Հէնց ահա բնութեան այդ օրէնքների երկու եղանակով են ներգործում։ — Երևակայեցէք մարդուն ճշմարիտ ջերմեռանդ հոգւով, որ ճանաչում է Աստծուն հաւատով և աղօթքով, որ հաւատի առաջին արտայայտութիւնն է։ Այսպիսի մարդը հիանում է բնութեան օրէնքների մեծութեան և ներդաշնակութեան վերայ, բայց ընդ նմին գիտէ, որ նոցա մէջ յայտնուում է և նոցա ետև կանգնած է յաւիտեանս գոյութիւն ունեցող սէրն Աստուծոյ։ Ընդհակառակն ներկայացրէք ձեզ մի հոգի հեղգ և անհաւատ և դուք կտեսնէք, որ նա կհանի բոլորովին հակադիր եզրակացութեան։ Տիեզերքի օրէնքների մէջ նա կտեսնէ ինչ որ ճակատագրական, անխուսելի և անպարտելի մի բան։ Տիեզերքը կերևի նրան այն ժամանակ իբրև պատճառների և հետևանքների մի մեծ շղթայ, իբրև շարք իրար մէջ հագցուած առանձնաւոր անիւների, անընդհատ յայտնութիւն անվերջ ճակատագրութեան։

Եզրակը, այստեղ ծածկուած է մեծ փորձութիւն հաւատի համար։ Աստուած բացակայ է, Աստուած լռում է, իսկ բարոյականութեան օրէնքներն քանդարարուում են. լսուում են ծաղրածութիւնք և հայհոյութիւնք Աստուծոյ դէմ, մեղաւորք յաղթանակում են, իսկ Աստուած իւր շրթունքները չէ բաց անում։ Ուստի և մեղաւորների սրտին տիրում է յանդգնութիւնն և լսուում է զարհուրելի աղաղակն որ երբեմն մեղաւորներն ուղղեցին թագաւոր մարգարէին, «ի՞նչ է անում քո Աստուա-

ծըդ»։ Կրկնում եմ. այստեղ է մեծ փորձութիւնը հաւատոյ համար, բայց այս փորձութիւնը մեզ համար նախագուշակած էր, ուստի և պէտք է տանիմք նրան, իմանանք, պէտք է տեսնենք ծաղկեալ Աստծուն, լսենք լուռ Աստծուն, պէտք է համոզուած լինինք նորա արդարութեան, ողորմածութեան և սիրոյ մասին, չնայելով բոլոր անօրէնութեանց, որոնք անարգում են նորան. պէտք է ծառայենք նրան և այնպիսի կեանք վարենք, որ միշտ պատրաստ գտանուենք նրան դիմաւորելու։ Երանելի են ծառայք, որոնց Տէրն արթուն գտնէ իւր գալստեան ժամին (Բէրռլէ)։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՐԶԳԱՑԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՑԵՑԱԿԷՏԻՑ

(Շարունակութիւն)

Երևակայենք տեսողութեան անսովոր թափանցականութիւն ունեցող մի անձն՝ տասներկուորդ մեծութեան աստղի վերայ, որից նա հեռաւորութեան տեսնում է ելևէջ այնպէս, ինչպէս եղել է Աբրահամի ժամանակները։ Եւ այժմ երևակայենք, որ այս դիտողը շարժուում է դէպի մեր երկիրը այնպիսի արագութիւնով, որ նա կարճ ժամանակում՝ ընթացքում՝ օրին. մի ժամում՝ հասնում է այնպիսի հեռաւորութեան մեզանից, որի վրայ գտնուում է արեգակը, ուր ինչպէս վերևը ցոյց է տուած՝ երկիրը երևում է այնպէս, ինչպէս էր ուղիղ տասնից տարի առաջ։ Պատկերացնենք մեզ այս, և այն ժամանակ մենք կհամոզուանք, թէ այսպիսի դիտողի աչքի առաջ կանցնի մի ժամուայ ընթացքում ամբողջ հասնելիարկայինի պատմութիւնը Աբրահամի ժամանակից մինչև ցայսօր։

Որովհետև, այն վայրկենում, երբ նա ակում էր իւր ճանապարհորդութիւնը, նա տեսնում էր երկիրը այնպէս, ինչպէս այ էր 4000 տարի սրանից առաջ։ Ճանապարհի կէսին, կէս ժամից յետոյ, նա տեսնում էր 2000 տարի սրանից առաջ կատարուած անցքեր. երեք քառորդ ժամից յետոյ տեսնում էր այն, ինչ որ հազար տարի առաջ էր լինում՝ և վերջապէս, մի ժամ շարունակ տեղափոխուելուց յետոյ, տեսնում է այն ինչ որ այժմ կատարուում է նրա վրայ։ Ուրեմն անհերքելի ապացուցած է, որ եթէ մի այլ աչքը կարողանար հետևել միմեանց փոխանակող երևոյթների այս բոլոր շարքին, դիտողը ահագին արագութիւնով աշխուժ կտեսնէր ամբողջ համաշխարհային պատմութիւնը, բոլոր մարդկային գործառնութիւնների ու անցքերի հետևիւնն, որոնք կատարուել են 4000 տարուայ ընթացքում երկրիս վերայ։

Բաժանենք ժամը 4000 մասի, իւրաքանչիւր այսպիսի մասը՝ հետևաբար՝ գրեթէ՝ հաւասար կլինի մի վայրկենի։ Ուստի՝ մի վայրկենի ընթացքում մեր երևակայած դիտողը կտեսնի մի ամբողջ տարուայ ընթացքում կատարուած անցքերի շարքը։ Այս բոլոր անցքերը անցնում են նրա առաջ բոլոր մանրամասնութիւններով, գործող անձերի բոլոր շարժողութիւններով ու դրութիւններով, բոլոր փոփոխուող պարագաներով։ Այս բոլորը՝ շարան շարան՝ հանդիսանում է նրա հայեացքի առաջ, այս բոլորը նա տեսնում է ամբողջապէս չկրճատած, միայն չափազանց արագ յաջորդութիւնով. և մի ժամը նրա համար պարունակում է այնքան անցքեր, որքան 4000 տարին երկրի բնակիչների համար։

Ինչպէս մենք ենթադրեցինք՝ թէ մեր երևակայած դիտողը 12-րդ մեծութեան աստղից մինչև մեզ եկած տարածութիւնը անցնում է մի ժամուայ ընթացքում, նոյնպէս մենք կարող ենք մեզ պատկերացնել և այն՝ թէ նա այս տարածութիւնը կանցնի և մի վայրկենում՝ կամ թէ, էլեքտրամագնիսական ուժի նման, անչափ կարճ ժամանակուայ ընթացքում։

Ինչպէս առաջին դիտողը տեսնում է 4000

տարուայ պատմութիւնը մի ժամուայ ընթացքում այնպէս մենք կարող ենք երևակայել թէ նա տեսնում է այս ամբողջ պատմութիւնը, բոլոր անցքերով լիուլի բովանդակութիւնով, որքան ուշիս կարճ ժամանակում։

Սարդկային խելքը շուարում է, հարկաւ, պատկերների այս բազմազանութիւնից ու արագ փոխանցութիւնից, սակայն հինգ զգրաական էակը, որ ունի նոյն ընդունակութիւնները, ինչ որ ունի մարդս, միայն գերազոյն աստիճանով, կարող է ապրել չորս հազարամեայ պատմութիւնը մի վայրկենի ընթացքում։ Աչքերի արագահասութիւնը տալիս է պարզորոշ հասկացողութիւն այն փիլիսոփայական սկզբունքի վրայ, ըստ ժամանակը չէ ինչ, որ ինչ-որ կայ, այլ դոյն չէ ա՛ չարաչարելո՛ն, առանց որի ոչինչ չէնչ կարող դառնալ նրա բովանդակո՛ւթեան վրայ, այսինքն յաջորդաբար կատարուող անցքերի վրայ։

Եթէ ժամանակը լինէր՝ ինքն իրան գոյութիւն ունեցող իրական մի ինչ, անկարելի կլինէր, որ կարճ ժամանակուայ ընթացքում կարողանար կատարուել այն, ինչ որ կատարուում է երկարատև ժամանակում։ Աչքերս մենք տեսանք, ինչպէս մի վայրկենի ընթացքում թանձրացան 4000 տարուայ անցքերն և ընդամին ոչ կրճատուած կամ փոփոխուած կերպով, այլ այնպէս, որ իւրաքանչիւր անցք իրապէս կատարուում է բոլոր մանրամասնութիւններով ու նոյն պայմաններով։ Աչքիս համար ժամանակի տևողականութիւնը էական չէ կատարուող բանի համար։ Վախճանը ա՛ – ահկերէք կոչող են յա՛ղթել և՝ գայթով որպէս պարտաւորել ձեզ՞ գործածը ամբողջ-պէս։

Աչքս կշռադատութիւնները այլասէս լուսաբանելու համար մէջ բերենք յետագայ զրոյցը։

Նախորդ դարու ութսուն թուականներին մի ֆրանսիացի քարոզիչ իւր ընտանիքով բնակութիւն հաստատեց Լաբրադորի սառուցեալատ հովիտներում՝ էսկիմոների մէջ քրիստոնէութիւն տարածելու նպատակով։ Այնն բան՝ ինչ որ հարկաւոր էր փոքր գաղթականութեան գոյութեան համար բերուում էր Եւրոպայից. տարին մի անգամ ուղարկուում էր մի նաւ, որ

պարունակուում էր քարոզիչների համար բոլոր պաշարեղէնը. այս նաւը բերում էր նրանց այն ամենը, ինչի կարօտ էին քարոզիչները իբրև մարմնեղէն ու հոգևոր կերակրի:

Նաւի գալստեան օրն, օրին՝ հարկաւ ամենքն յայտնի անհամբերութիւնով սպասում էին, միակ վայրկեանն էր տարուայ մէջ, երբ քարոզչի ընտանիքը հայրենիքից լուր էր ստանում. նրանց բերում էին ամբողջ անցած տարուայ լրագիրները:

Որքան էլ հարցասիրելի չէր նրանց համար իմանալ, թէ ինչ էր եղել լոյս աշխարհում անցած տարուայ ընթացքում, սակայն նրանք կանուն էին դրել իւրեանց համար՝ ամէն օր կարդալ միայն լրագրի մի համարը, հէնց այն, որը ճիշդ մի տարի առաջ էր դուրս եկել: Այս իւրեանց վրայ դրած կանոնը նրանք ոչ մի անգամ զանցառութեան չտուին իւրեանց Աբրահամօրում եղած ամբողջ ժամանակը:

Երբ ծագեց ֆրանսիական յեղափոխութիւնն և յաջորդ տարիներն այնչափ նշանաւոր պատմական իրողութիւնք կատարուեցան, այն ժամանակ, կարող էք երևակայել՝ թէ ինչպէս անհամբեր սպասում էին հետևեալ օրուան, որ կարենան լրագրի հետևեալ համարը բանալ ու կարդալ նրա մէջ, թերևս, սիրելի ազգականի մահի մասին, կամ՝ թէ նոր օրէնքների ու կարգադրութիւնների մասին, որոնք ֆրանսիայում սահեղծել էին գոյութեան նոր պայմանները: Այն գիրքն, որի մէջ գրուած էր ապագան նրանց առաջն էր, բայց իրանցից դրած օրէնքը արգելում էր նրանց թերթել այս գիրքը, իսկ այնպէս, ինչպէս բնութեան օրէնքը մարդուս արգելք է լինում տեսնել իւր ապագան:

Այս օրինակից մենք կարող ենք ստանալ մի շատ ակներև մոտապատկեր մի որ և է բարձր էակի ամենագիտութեան վրայ, եթէ մենք երևակայենք՝ թէ նրա առաջ բացուած են անցեալի ու ներկայի գրքերն, որոնց բովանդակութիւնը նա կարող է իմանալ մի հայեացքով, այնպէս որ նրա համար չկայ երեկուայ ու այսօրուան օրը, այլ նրա համար մի օրը ինչպէս հազար տարի է, և հազար տարին ինչպէս մի օր է:

Ե.

Իսկ և իսկ այնպէս, ինչպէս՝ շատ արագ շարժուելով մի որ և է աստղից դէպի երկիրը՝ կարելի է խտացնել անցքերի պատկերները կարճ ժամանակուայ միջոցում, իսկ այնպէս էլ կարելի է, և, ընդհակառակը, ձգձգել այդ անցքերը որքան ուզես մեծ աստիճանով հետևեալ կերպով։

Աւենք՝ թէ լոյսը և՛ սրա հետ երկրային անցքերի պատկերները հասնում են մի որ և է աստղի ճիշտ 20 տարուայ մէջ. երևակայենք այժմ, թէ մի դիտող, սկսելով իւր ճանապարհորդութիւնը այն վայրկենում, երբ ծաղկի բաժակը սկսում է բացուել, գնում է դէպի այդ աստղը 20 տարուայ ու մի օրուայ ընթացքում, եթէ նա կարողանար դիտել այս ծաղիկը իւր բոլոր ճանապարհորդութեան ժամանակ (որի համար նա պէտք է ունենար չափազանց լաւ տեսողութիւն ու դիտողականութիւն), նա 20 տարի ժամանակ կունենար դիտելու այն փոփոխութիւնները, որոնք լինում են ծաղկի մէջ մի օրուայ ընթացքում։ Ծաղկի ձևի աստիճանաբար զարգացումը ամենապարզ կերպով կպատկերանար նրա աչքի առաջ. և ինչպէս մենք հապիւ կարող ենք զանազանել թռչող թիթեռնիկի թևերի գոյները, իսկ եթէ մենք կարողանայինք հետևել նրա շարժողութիւններին, մենք կարողութիւն կունենայինք համարել նաև նրանց ծածկող գունաւոր փոշու հատիկները, այնպէս էլ դիտողը, որ կարենար հետևել լուսոյ ճառագայթի թևերի վերայ մի որ և իցէ արագ անցնող երևոյթի. առանց շոտպելու կը կարենար լիովին ճիշտ զննել ամենանուրբ մանրամասնութիւնները ու ամենափոքր փոփոխութիւնները։ Այսպիսով՝ ստեղծուած կլինէր՝ այսպէս ասած՝ ժամանակի համար մի մանրադիտակ. արդարև՝ խոշորացոյց ապակու միջնորդութեամբ մենք կարող ենք մի առարկայից բաւնուած տարածութիւնը մեծացնել հազար անգամ և, այսպիսով, մենք կարողութիւն ենք ստանում զանազանել զննելի մարմնու փոքր ու իրար մօտ գտնուող մասերը, որոնք անղէն աչքի համար ձուլուած են մի կէտում. այնպէս էլ և

նա, ով կկարենար, լուսոյ ճառագայթի հետ շարժուելով, հետեւել օրերով ու տարիներով մի որ և իցէ երեւոյթի, կգտնէր առանձին գործողութիւնների անթիւ բազմութիւն, որոնց գոյութեան մասին այլապէս ոչինչ էլ չէր կարող կասկածել. և նա նոյնպէս կզարմանար այս գործութիւնների հետեւանքների վերայ, ինչպէս մենք զարմանում ենք մանրադիտակի տակ գըտնուած անթերեւոյթ աշխարհների վերայ:

Այսպէս օրինակի համար՝ տասներկրորդ մեծութեամբ աստղի վերայ, ինչպէս մենք ասացինք, ներկայ ժամանակում տեսանելի են երկրի նախապատմական կերպաւորութիւնների գործողութիւնները. ուստի մի դիտող, եթէ շարժուէր դէպի այս աստղը աւելի արագ քան լուսոյ արագութիւնը, հետանալով երկրից, կարող էր իւր աչքերով հետազօտել ու մեկնել մեր երկրի կեղեւի ծագումի ու զարգացումի վերայ ունեցած այն հանելուկները, որոնց վճռելու համար ճիգն են թափում մեր ուսումնականները և բնազննիչները: Բայի սրանից, այս ամենը վերաբերուում է ոչ միայն երկրին, այլ և որ աստղին որ ուղեւորութեան աստղի պատկերը ճանապարհորդում է միւս աստղերի մէջ. և ոչ միայն մեր մոլորակի այլ և բոլոր աշխարհների պատմութիւնը բացուած դրած է այժմ տարածութեան մէջ, ինչպէս սիեզերական պատմութեան ճշմարիտ ու վեհ պատկերը:

Թէպէտ և մենք մի քանի անգամ պնդեցինք՝ թէ այստեղ խօսքը այն բանի վերայ է միայն, ինչ որ հնարաւոր է դիտողին կամ իրականութիւն. սակայն՝ մենք կաւելացնենք նրանց համար, որոնք չեն կարող կատարելութեան գաղափարից անջատուել, հետեւեալ կշռադատութիւններն էլ:

Եթէ մենք տեսնում ենք հեռաւոր առարկաներն աւելի փոքր չափով, քիչ պարզ, քիչ որոշ ձեւերով ու գոյներով, սրա պատճառը՝ նախ մեր աչքի կազմութիւնն է, և երկրորդ՝ մեր մթնոլորտի ոչ լիակատար թափանցութիւնը: Տեսողութեան ճառագայթները մեր աչքերից իրարից հեռանում (divergens) են լինում՝ ան

կիւն կազմելով, այնպէս որ մօտ հեռաւորութեան վերայ բաւական է արդէն մի փոքր մարմին, որ տեսանելի տարածութեան մեծ մասը բռնի, մինչդեռ աւելի մեծ հեռաւորութեան վերայ, հարկաւոր է աւելի մեծ մարմին, որ ճառագայթների խոտորագնացութիւնից մեծացած տարածութիւնը լցուի։

Եթէ մենք մեր աչքի առաջ կունենանք մեր պարզած ձեռքում փոքրիկ գրամ, նրանով կարող ենք ծածկել ամբողջ արեգակը։ Բայց եթէ տեսողութեան գործարանը կազմուած լինէր այնպէս, որ տեսողութեան ճառագայթները դուրս գային իրանից զուգահեռաբար, այն ժամանակ մենք բոլոր առարկաները կտեսնէինք իւրեանց իսկական մեծութիւնով, բոլորովին անկախ զննուող առարկայի աչքից ունեցած հեռաւորութիւնից։ Մենք կտեսնէինք ոչ ամբողջ մարմինն, այլ միայն նրա փոքր մասը, որ կհամապատասխանէր այս կերպով կազմուած տեսողութեան գործարանի մեծութեանը, և այս փոքր մասը միատեսակ պայծառութիւնով տեսանելի կլինէր՝ որքան հեռաւորութիւնից որ ուզես, և մենք կարող էինք զանազանել խոտի տերևը ամենահեռաւոր աստղի վերայ, եթէ միայն մթնոլորտը լիակատար թափանցիկ լինէր և չունենար լոյս կլանող մասեր, և եթէ նոյնպէս դիտուող աստղն էլ շրջապատուած չլինէր դիտելի արգելող մթնոլորտի խաւով։

Ա յսպիսով, տեսողութեան գործարանի այս օրինակ կազմութիւնը ևս աւելի կարելի է կացնում մեր վերևը արտայայտած ենթադրութիւնները. սակայն զուր աշխատանք կլինէր շարունակել այս տրամախոհութիւնների թելը և դուրս բերել՝ թէ մի ինչ կարելի կլինէր, եթէ կարելի լինէր մի այլ ինչ. որովհետև հիւսուածքների այս օրինակ խաւախարդելը մնում է տակաւին իբր ֆանտազիայի խաղ, որ մտքի առաջ կթափթի չթողնելով մնայուն հետք։

Սակայն՝ եթէ մենք շարունակում ենք մեր դատողութիւններն, այս նրանից է առաջ գալիս, որ մենք համոզուած ենք, թէ ենթադրութիւնների այս երևակայած կազմութեան շնորհիւ մեզ յաջողուում է տալ ընթերցողին շօշափելի ուսկներև

մասպատկեր ժամանակի ու տարաճութեան վերայ։ Մինչդեռ առանց այսպիսի լուսաբանութիւնների, վերացական հասկացողութիւնները մարդկանց համար դատարկ հնչիւններ են։ Որովհետև պէտք է զանազանել մի որ և իցէ դրութեան խոստովանելն այն հիման վերայ, որ դէպի նրան տանող դատողութիւնների շարքը անվիճելի է, այս դրութեան ճշմարտութիւնը անմիջապէս պատկերացնելուցն այնպիսի ակն յայտնի ձևով, որ մենք միանգամից տեսնում ենք իրան հակաճառող ամեն բանի անհեթեթութիւնը։ Այսպէս օրինակի համար, ով կծանօթանայ այն ապացուցութեան՝ թէ եռանկիւնու անկիւնների գումարը հաւասար է երկու ուղղանկիւնի, պէտք է այս դրութեան ճշմարտութիւնը խոստովանի, սակայն դեռ չէ կարելի ասել՝ թէ նա հասկացել է այս դրութիւնը. այսպէս հասկանալու համար պէտք է, որ նա անմիջապէս տեսնի, թէ եռանկիւնու իսկ էութեան համաձայն այսպէս պէտք է լինի, և թէ եռանկիւնը՝ առանց այս յատկութեան նոյնպէս անհիմնալի է, ինչպէս քառակուսի շրջանակը։

Ահա այսօրինակ ակներև մտապատկեր, այսօրինակ անմիջական ըմբռնողութիւն մենք ուզում ենք հաղորդել ընթերցողին տարաճութեան ու ժամանակի վերայ ունեցած գաղափարների մասին։

Զ.

Մարդկանց հետաքրքրութիւնը դէպի դանազան հարցեր տարբեր է և յաճախակի հակադիր է՝ ինչ որ մեկին թուում է մեծ կշիռ ունեցող, այն բոլորովին անփոյթ է թողնում մեկան։ Բայց դ հարց կայ, որ պէտք է հետաքրքրէ իւրաքանչիւր մարդու, և որ իրապէս վերին աստիճանի հետաքրքրում է ամեն մարդու, թէպէտ և իւր պատմութիւնքն և իւր մտաւոր գործունէութեան ուղղութիւնը սովորաբար՝ չեն թոյլատրում նրան զբաղուելու լրջութեամբ ու անդադար սրա վճռելու փորձ անելով։ Այն է այս հարցը, թէ ինչ է ուրեմն երը և ինչու համար գոյութիւն ունի։ Այս հարցը չի հանուիլ մարդկային

ոգուց: Արդէն երեխան հարցնում է երկնքի ու երկրի արարչի մասին, և հանգստանում է ու բաւականանում է դերիմաստ ու աւելնաբարի Աստուծոյ Արարչի վերայ ցոյց տալով: Աւելի հասուն տղայ խելքին արդէն բաւական չէ այսպիսի պատասխանն, որովհետև նա հակաճառութիւն է տեսնում միակ պատճառի՝ Աստուծոյ և տիեզերքում տեսանելի հետևանքների բազմազանութեան մէջ:

Մեր խելքը կարող է առգրել հասարակ ու միակ պատճառին միայն նոյնպիսի հասարակ ու միակ հետևանք, և երբ մենք տեսնում ենք զանազան երևոյթներ, մենք վնտռում ենք նրանց համար և զանազան պատճառներ, այս կանոնը բացառութիւն չէ սիրում. մենք վնտռում ենք՝ նաև ախտմայ՝ զանազանութիւն այն տեղում, ուր մեր արտաքին զգայարանները մտանոգայց չեն անում նրա վերայ: Այսպէս մենք տեսնում ենք թէ արևի ճառագայթը լուսաւորում էլ է, տաքացնում էլ է, և մենք իսկոյն և եթ մտաւորապէս արոհում ենք նրան երկու մասնի, լուսաւորող ու տաքացնող էութիւնից, որովհետև մենք անհրաժեշտ կերպով մղում ենք վնտռելու երկու պատճառ այնտեղ, ուր մենք տեսնում ենք երկու զանազան երևոյթ՝ լոյս ու տաքութիւն:

Բայց մենք՝ բոլոր պատճառների ու հետևանքների ամբողջութեան համար, որոնք մենք տեսնում ենք աշխարհումն և որոնք վերջինս լցնում են, որոնք աշխարհի էութիւնն են, վնտռում ենք մէկ նախնական պատճառ, մէկ նախասկիզբն ստեղծող, որի մէջ մենք չենք կարող թոյլ տալ տարբերութիւն ու բազմազանութիւն, որովհետև, վերջին դիպուածում, մենք էլի կգայինք այս բազմազանութեան ծագումի հարցին:

Անմիտ բան կլինէր էլի հարցնել նախապատճառի պատճառի մասին, որովհետև «նախապատճառ» ասուած հասկացողութիւնն արդէն նրանումն է, որ իրանից առաջ մի այլ պատճառ անմտածելի է: Այսպիսի միակ պատճառի վնտռելն է նոյնպէս մարդկային խելքի անվիճելի յատկութիւնը:

Փիլիսոփայութեան գործն է մեկնել ու հետացնել երևացող

չափաճառութիւնը. յառաջօրէն ան պնդում էր՝ թէ զօրութեան ծագումի հանելուկը լուծել է, սակայն անտեղեակ մարդս հարցին միշտ պատասխանել է միայն փախուստ տալով ասելով թէ հարկաւոր է գիտութիւնը ուսումնասիրել խորին կերպով, եւ ձեռք բերած հետեւանքները հասկանալու համար: Բայց մենք այսպիսի պատասխանով բաւականանալու չափ այնքան համեստ չենք, և աւելի ևս կասկածելի է թուում մեզ փիլիսոփաների այսօրինակ պնդումը, որ նրանք չեն կարող նաև միեւնոյն համոզել, այլ իւրաքանչիւր նոր փիլիսոփայ հերքում է նախորդին. սմեն այսպիսի դիպուածում, կարելի է, որ գիտութիւնը մի քայլ առաջ է գնում, բայց հաւաստի է՝ որ ան դեռ չի հասել իւր նպատակին:

Որովհետև, այս կողմից կորուած է ձանապարհը այս հակաճառութիւնը պարզաբանելու համար, որից մարդկային խելքը չէ կարող դուրս պրծնել, մենք կաշխատենք ցոյց տալ, բոլորովին հանրահասկանալի կերպով թէ ինչպէս և որքան այսպիսի լուծումը մտածելի է:

Բոլոր բազմազանութիւնը, որ մենք ըմբռնում ենք տիեզերքում կարելի է բաժանել երկու կարգի: Առաջին, որ մենք տեսնում ենք զանազան առարկաներ, ինչպէս են՝ օրինակ՝ աստղեր, մարդիկ, կենդանիներ, բոյսեր և այլն. երկրորդ, որ մենք գիտենք զանազան ձշմարտութիւններ և ունենք զանազան մտքեր: Եւ այսպէս, այն ձանապարհը ցոյց տալու համար, որին մենք պէտք է հետևենք, որ հասկանանք՝ թէ ինչպէս կարելի է բոլոր տիեզերքը համարել իբր միակ անբաժան ամբողջութիւն, մենք պէտք է վճռենք երկու տեսակ հարց: Առաջին, որ մենք պէտք է ցոյց տանք, թէ ինչպէս մեր բոլոր մտքերն և մեզ յայտնի ձշմարտութիւնների բոլոր բազմազանութիւնը կարող է հասկանալի լինել իբր մէկ ձշմարտութիւն, և երկրորդ, որ կարելի է երևակայել ժամանակով ու տարածութիւնով զանազանուող տիեզերքի մասերը համակենտրոնացած մէկ անբաժանելի կէտում:

Առաւել դիւրին է գտնել մեր խնդրի առաջին մասի լուծու-

մը: Կայ ինչո՞ւ ճշմարտութիւնը և, եթէ մեզ թուում է, թէ մենք տեսնում ենք շատ, զանազան ճշմարտութիւններ, այս յառաջանում է մեր խելքի անկատարելութիւնից, որը տրոհում է նրան բազմաթիւ առանձին ճառագայթների:

Պարզենք նախապէս հասարակ օրինակով, թէ ինչպէս պէտք է այս հասկանալ՝ մարդ մոռանում է, մարդ ղգում է, մարդ մահկանացու է, այս սոսկական հասկացողութիւններով երեք ճշմարտութիւն են, այն էլ երեք զանազան ճշմարտութիւններ: Բայց այս զանազանութիւնը ծագում է միայն նրանից, որ մենք չենք կարող ըմբռնել «մարդ» ասած հասկացողութիւնը, իրանից դուրս եկած ամեն բանով ամբողջապէս և միանգամից: Եթէ մենք կարողանայինք նրան այսպէս հասկանալ, եթէ՝ լսելով «մարդ» բառը, անյապաղ և անընդմիջապէս ունենայինք մտքում այն ամենը, ինչ ոչ այս հասկացողութիւնն է պարունակում, ինչ որ նրա էութիւնն է, մենք «մարդ» բառով կըմբռնենք և մտքի, խելքի ու մահկանացութեան հասկացողութիւնը, և մեր միտքը չէր գալ այս հասկացողութիւնը տրոհել ու ասել՝ բացի սրանից՝ թէ մարդ մահկանացու է, իսկ այնպէս, ինչպէս մենք ոչ մի նոր բան ասած չէինք լինիլ, եթէ ասէինք՝ թէ քառանկիւնը չորս անկիւնանի է, որովհետև այս յատկութիւնը արդէն պարունակում է հասկացողութիւն իրան մէջ, որուում է ու հասկացուում է միանգամից իւր հետ:

Մի ուրիշ օրինակով ևս աւելի կպարզուի այս:

Նա, ով լիովին հասկացել է և գիտէ, թէ ինչ է եռանկիւնը, նա անմիջապէս և նրանով իսկ, արդէն գիտէ (և ոչինչ էլ չէ հարկաւոր նրան յիշեցնել սրա վերայ) թէ եռանկիւնը ունի երեք կողմ ու երեք անկիւն, թէ երեք անկիւնի գումարը հաւասար է երկու ուղիղ անկիւնի, թէ նրա գագաթներից հակադիր կողմերի վերայ ձգած ուղղահայեաց գծերը կտրուում են մէկ կէտում. մի խօսքով, այն ամենը, ինչ որ երկրաչափութիւնը դուրս է բերում և ապացուցանում է, և որին մենք ընտելանում ենք միայն փաքր ինչ դժուարութեամբ:

Նա, ով ամբողջովին ու կատարելապէս կըմբռնէը մեր երկրի

վրայ ունեցած հասկացողութիւնը, պէտք է վիճակամից, ու անվիջապէս, հասկանար՝ թէ երկիրը գնդաձև է, թէ նա կշիռ ունի, և ինչ մասերից է բաղկացած, ինչ ճանապարհ է կտրում արեգակի շուրջը և ինչ էակներ են նրա վերայ բնակում: Նա կհասկանար մարդուս իւր բոլոր գործերով ու ձգտումներով, մտապատկերներով ու հասկացողութիւններով, մտքի օրէնքներով ու զգայութեան խաբսերով, և ընդ ամին ինչպէս անմիջապար ու անհրաժեշտ կերպով երկիր ասած հասկացողութիւնից դուրս եկած հասկացողութիւն, այնպէս որ նրա միտն անգամ չէր կարող գալ անջատելու այս եղանակով իւրեան յայտնի ճշմարտութիւններից մէկը և համարել սրան մի առանձին բան, ինքն իրան գոյութիւն ունեցող, որովհետև նա կհասկանար բոլոր այս ճշմարտութիւնները՝ իբր ակնյայտնի, որոնք պարունակուած են «երկիր» ասուած հասկացողութեան մէջ: Նա նոյնպէս չէր կարող մի որ և իցէ ճշմարտութիւն իբր առանձին առած համարել: Ինչպէս և մենք գիտենք՝ թէ ոչինչ առանձին կամ նոր բան ասած չենք լինիլ, ասելով՝ թէ քառանկիւնին չորս անկիւնանի է:

Եթէ ընդհանրացնենք այս տեսակ՝ մանուածոյթիւնները պարփակող հասկացողութիւնը ամբողջ գոյութիւն ունեցող տիեզերքի վրայ, որ պարունակում է զգացութիւնների բոլոր փորձնական տեղեկութիւնները, հասկացողութիւններն ու ճշմարտութիւնները, մենք տեսնում ենք, որ ամենաբարձր կատարեալ հմտութիւնը պարունակում է մէկ ճշմարտութիւն, մի մտապատկեր, մի հասկացողութիւն, այն է՝ Տիեզերք:

Մարդ միայն իւր մտածողութեան անկատարելութեան պատճառով որոհում է այս ընդհանուր հասկացողութիւնը. պատճառը այստեղ նոյնն է ինչպէս վերևը յիշած օրինակի մէջ, որտեղ, ինչպէս մենք տեսանք, մարդ մանաւանդ որոհում է արևի ճառագայթներն երկուսի՝ տաքութեան ու լուսոյ, որովհետև տեսնում է երկու երևոյթ՝ լոյս ու տաքութիւն: Բայց տիեզերքը մի գործարանական ամբողջութիւն է, և նա ով լիովին հասկացել է այս գործարանական կազմուածքը, նա արդէն հէնց հասկացել է և բոլոր նրա բաղադրիչ մասերը:

Է.

Բաւականանանք այսքանով մեր խնդրի առաջին մասի զննելու-մը՝ խնդրի՝ որ է ցոյց տալ՝ թէ կայ Մի ճշմարտութիւն, կամ գոնէ կարելի է երևակայել բոլոր ճշմարտութիւններն, որպէս միակ, անբաժան ճշմարտութիւն, և թէ միայն մարդկային մտաց սահմանափակութեան պատճառով է, որ նա (ճշմարտութիւնը) մտածութեան առարկայ է դառնում մաս առ մաս:

Մեր խնդրի երկրորդ մասն է ապացոյց տալ՝ թէ ժամանակով ու տարածութիւնով տարբեր երևոյթները կարելի է նոյնպէս երևակայել ձուլուած մէկ կէտում:

Մենք արդէն ցոյց տուինք այն մարդու օրինակովը, որ ճանապարհորդում է աստղային տարածութիւններում, և անցնում է 12 որդ մեծութեան աստղից մինչև մեր երկիրը եղած հեռաւորութիւնը կարճ ժամանակում, թէ ինչպէս կարելի է ակներև տեսնել, որ ժամանակը՝ բոլոր իւրեան մէջ կատարուող եղելութիւններով՝ թանձրանում է որքան ուզես կարճ ժամանակամիջոցի մէջ:

Բայց այս օրինակի մէջ՝ իրապէս, թանձրանում են ոչ եղելութիւնները իրենք, այլ նրան նրանց լուսեղէն նկարներն անցնում են դիտողի առաջ չափազանց մեծ արագութիւնով, ուստի մեզ դեռ մնում է ցոյց տալ ընթերցողին, թէ ինչպէս նոյն այս եղելութիւնները կարող են հաստատաձայն լինել ինչ կէսոմ. մեկնել՝ թէ ինչպէս կարելի է թանձրացնել ժամանակի մի վայրկենում ոչ միայն երեւոյթների պատկերներն, այլ նոյն իսկ եղելութիւնն ամբողջապէս ու բոլոր մանրամասնութիւններով, և թէ նաև այն, ինչ մենք անուանում ենք երկար կամ կարճ, իրապէս՝ պայմանաւորուած է միայն նրանով, ինչպէս մարդ հասկանում է իրերը:

Ասենք՝ թէ մի որ և իցէ վայրկենից, զոր օրինակ. այսօրուանից, երկրի ու բոլոր երկնային մարմինների արագութիւնը աւելանում է երկու անգամ, այնպէս որ տարին կտևի այժմեան վեց ամիսը, իսկ իւրաքանչիւր տարուայ եղանակը այժմեան

վեց եօթնեակը, օրը — այժմեան 12 ժամը ևլն. բացի սրանից, միաժամանակ սրա հետ, թոզ փոփոխուի սոյն կերպով մեր կենսական գործողութիւնների արագութիւնը, այնպէս որ խորին ծերութիւնը կլինի ոչ ութսուն տարուայ, այլ քառասուն տարուայ մէջ. մեր շնչառութիւնը ու զարկերակի հրոյթը, ճօճանակի ճօճուելը, նոյնպէս սկսում են կրկնակի արագութիւնով կատարուել, և որ մեր գործարանական կազմուածքի այս նոր վիճակը կանոնաւոր վիճակ է: Ժամացոյցի սլաքները շրջան են կատարում ոչ մի ժամում և 12 ժամում, այլ լօպէացոյց սլաքը 30 րոպէի մէջ, ժամացոյց սլաքը — վեց ժամում: Բոյսերի ու կենդանիների աճիլն ու զարգանալը նոյնպէս արագանում են կրկնակի առաջուանից. հոդմը ու կայծակը կրկնակի արագութիւնով անցնում են առաջուայ հեռաւորութիւնները *):

Ասենք թէ այս ամենը կատարուած է: Ինչպէս կվերաբերէինք մենք դէպի այս փոփոխութիւնները: Պատասխանն կլինի՝ մենք չենք նկատիլ ոչ մի փոփոխութիւն. մենք խելագար ու ցնորամիտ կասէինք նրան, ով կպնդէր՝ թէ այս տեսակ փոփոխութիւն է յառաջացել: Մենք ոչինչ չենք ունենալ, որ կարողանար ցոյց տալ կատարուած փոփոխութիւնը:

Արդարև՝ մենք ժամանակը չափում ենք միայն մի ժամանակամիջոցի միւսի հետ բաղդատելով, և որովհետև մեր ենթադրութիւնների համաձայն ամեն ժամանակամիջոց, որից կարող էինք օգտուիլ այսպիսի բաղդատութեան կամ չափելու համար, երկու անգամ նուազել է, «ոչ նախկին յարաբերութեանը» կպահպանուէին ոչ համար անփոփոխ դրութիւնով բոլոր երևոյթների մէջ:

(*) Այս կարելի է աւելի ակներև պարզել. Բերը ենթադրում է, թէ արիւնի շրջաղնացութեան արագութեան փոխուելովը՝ փոխուում է և ջղի մէջ հաղորդութիւնը, և սրանով փոքր կենդանիները մի վայրկենում այնքան զգացութիւններ են ունենում, որքան մենք մի և նոյն երևոյթից մի ժամում: Այժմ երևակայէք ներհակը, թէ մենք զգացութիւններ ստանում ենք մի վայրկենի տեղ մի ժամում ևայլն:

Մեր քառասուն տարին կթուէր մեզ ութսուն տարի, ամեն բան կկատարէինք կրկնապատիկ աւելի արագ. և որովհետև մեր կենսական գործողութիւնները, շնչառութիւնը, շարժողութիւնը, նոյնպէս կփոխուէին նոյն յարաբերութիւնով, ոչ մի կտրելիութիւն չէր լինիլ ոչ չափելու և ոչ էլ հաստատելու կատարուած փոփոխութիւնը: Մեզ համար բոլորը մնում է կատարելապէս առաջուայ նման, ընդ ամին՝ ոչ միայն յարաբերաբար, այլ և իրապէս ու բացարձակապէս ոչինչ չէ փոխուում, մինչև որ մենք չափ չունենանք աշխարհի արագացած շարժողութիւնների համար, այս աշխարհիցը դո՞ւրս, որի հետ բաղդատելով մենք կարող լինէինք նկատել ու չափել այս փոփոխութիւնները:

Նոյնը կյառաջանար և բոլոր ժամանակամիջոցների, ոչ թէ երկու անգամ՝ այլ չորս անգամ նուազելով, այնպէս որ տարին կգլորուէր երեք ամսում, մարդուս կեանքի ամենամեծ տևողութիւնը, 80 տարուայ տեղ՝ կլինէր 20 տարի. և ամեն բան տիեզերքում կատանար համապատասխանօրէն արագացած շարժողութիւն: Եւ այս դիպուածում, մենք ոչ միայն չէինք նկատիլ ոչ մի փոփոխութիւն, այլ մենք՝ իրապէս՝ ոչ մի բանում չէինք փոփոխուիլ, և բոլոր երևոյթներն ու անցքերն իրենց տևողութիւնով ու հաղորդութիւնով կմնային կատարելապէս անփոփոխ:

Նոյն պատճառով, ստացուում է նոյն հետևանքը, ինչպէս չորս անգամ փոփոխուելուց, այնպէս էլ բոլոր շարժողութիւնների հազար միլիոն անգամ, կամ՝ մի խօսքով կուզես անհունթիւ անգամ. եթէ տիեզերքում՝ բոլոր երևոյթների ու մեր կենսական գործողութիւնների ընթացքը արագանար անհունթիւ անգամ, այսինքն ամբողջ տիեզերական պատմութիւնը համահաւասարուէր մի անչափ փոքր ժամանակի վայրկենում, մենք ոչ միայն չէինք նկատիլ ոչ մի փոփոխութիւն, այլ և իրապէս ոչ մի փոփոխումն յառաջացած չէր լինիլ:

Արդարև՝ երբ խօսքը գալիս է այն բանի վրայ, թէ որոշուած ժամանակամիջոցն ինչ տևողութիւն ունի, այս հարցին

կարելի է պատասխանել միայն այն ժամանակ, և այս ընդհանրապես միայն այն ժամանակ միտք ունի, երբ մենք կարող ենք բաղդատել այն ժամանակամիջոցը մի ալյ նոյնպես որոշ ու սահմանափակ ժամանակամիջոցի հետ, իսկ բաղդատումն «անհուն ժամանակի» հետ, որ չունի ոչ սկիզբն ոչ վախճան ընդհանրապես անկարելի է։

Այս բոլոր տրամախոհութիւններից երևում է, որ «ժամանակը» միայն եղանակ է, որով մարդկային միտքն արտաքին զգայարանների օգնութիւնով ըմբռնում է սիեզերքի երևոյթները, մինչդեռ այս երևոյթները իսկ կարող են կատարուել որքան ուզես կարճ կամ երկար ժամանակի ընթացքում, այնպէս որ նրանք անկախ են ժամանակից։ Խելքի մէջ փայլած միտքը վայրկենական է, նա, որի միտն է ընկնում մի որ և իցէ գաղափար, մտածում է սրա վրայ ամբողջապէս, միանգամից։ Բայց եթէ նա ուզում է հաղորդել ուրիշին այս գաղափարը, հարկաւոր է սրա համար մի քանի ժամանակ, նոյնպէս էլ մի քանի ժամանակ հարկաւոր է ուրիշների խօսքերից այս միտքը ըմբռնելու։ Եւ այս ժամանակը կարևոր է ոչ թէ մտքի կերպաւորութիւն ստանալու կամ գոյութիւն ունենալու համար, այլ միայն սրան ըմբռնելու կամ ուրիշին հաղորդելու համար. միտքը ինքը ժամանակից անկախ գոյութիւն ունի, այնպէս իսկ ինչպէս կարելի է և պէտք է հասկանալ տիեզերքը ժամանակից անկախ *)։

Ը,

Մենք տեսանք, որ եթէ ժամանակի էութիւնը զննուի, որոշ տուած ժամանակամիջոցի առաւել կամ նուազ տևականութեան հարցը միայն այն ժամանակ կշիռ ունի, երբ տուած ժա-

(*) Ընդարձակ երազը, որը քնած ժամանակ մեզ թուում էր շատ երկար, երբ ուրիշները քնած մարդուն դիտում են, թուում է վայրկենական։ (Մաուդսլի)։

մանակամիջոցը բաղդատուելով է ուրիշի հետ. իսկ մի որ և իցէ ժամանակամիջոցի երկարութեան հարցն բաղդատելով՝ ամբողջ անվախճան ժամանակի հետ՝ միտք չունի, որովհետև անհուն մեծութեան հետ բաղդատելով՝ ամեն վախճանաւոր մեծութիւն հաւասար է զրօի. սոյնպիսի հետևանք ենք ստանում և տարածութեան վերաբերութեամբ։ Այստեղ և, եթէ տիեզերքը ղննուի իբրև վախճանաւոր սահմանն ունեցող, այն ժամանակ, բոլոր տիեզերքը մի կէտ է՝ բաղդատելով անվերջ տարածութեան հետ, որի մէջ ինքը գտնուում է, որքան էլ մեծ չլինեն տիեզերքը, և որքան էլ ամենահեռաւոր աստղերի ու մշուշանման բիծերի սահմանից դուրս հեռու չընկնէին իւր եզրները։ Արդարև՝ պատկերացնենք մեզ, թէ տիեզերքի բոլոր երկարութիւնները երկու անգամ կարճացել են, բոլոր հեռաւորութիւնները երկու անգամ նուազել են, այն ժամանակ մենք ոչ մի կարելիութիւն չենք ունենալ այս փոփոխութիւնները նկատելու. մենք նաև չէինք կարող հաւատալ, եթէ մէկը պնդէր՝ թէ այսպիսի փոփոխութիւն յառաջացել է, և մենք կատարելապէս իրաւացի կլինէինք, եթէ մենք մեզ համարէինք լիովին կանոնաւոր մարդիկ, ինչպէս իւրեանց համարել են լիլլիպուտեանները Գուլլիվերի ղրոյցի մէջ։

Նոյնպէս նկատելի չէր լինիլ եթէ բոլոր երկարութիւնները նուազէին միլլիոն կամ բիլլիոն անգամ. և եթէ մեր բոլոր աստղային համակարգութիւնը յանկարծ կուչ գար իւր ամբողջ պարունակութիւնով մինչև որ հասնէր աւազի չափին, մենք կմնայինք այս փոքրիկ աշխարհում նոյն իսկ եղանակով, ինչպէս այժմ ապրում ենք մեր աստղային համակարգութեան մէջ, որը մեզ երևում է այնքան մեծ. մենք նորա մէջ կապրէինք նոյնպէս և նոյն չափ անստիպողականութիւնով ու յարմարութիւնով, ինչպէս այժմ։ Ոչ մի փոփոխութիւն չէր լինիլ, եթէ չկայ մեր աշխարհից դուրս մի ուրիշ աշխարհ. նոյն իսկ այն հարցը՝ թէ յառաջացել է արդեօք մի փոփոխութիւն տարածութեան մէջ՝ նոյնպէս նշանակութիւն չէր ունենալ, ինչպէս նրա նման հարցը ժամանակի վերաբերութեամբ, որը մենք

վերև զննեցինք։

Այսպէս մենք ապացուցեցինք, թէ մեր գիտակցութեան համար կմնար բոլորովին չնկատուած ու աննկատելի աշխարհի բոլոր չափսերի միաժամանակ նուազելը։

Սակայն՝ որքան էլ մենք չսղմէինք՝ այս եղանակով՝ տիեզերքը, մենք չէինք կարող վերացնել լիովին տիեզերքի չափսերը, որովհետև մենք տեսնում ենք, նաև ամենափոքր մարմնու մէջ, անհուն փոքր տարածութեան մէջ, մաթեմաթիկական անբաժանելի կէտից տարբեր մի բան։ Բայց հետևեալ օրինակից տեսանելի կլինի՝ թէ կարելի է երևակայել ինքեան ինչ տարածութեան որ ուզես, որ պարունակէր բազմաղան առարկաներ, և պարփակուած լիներ մէկ կէտում։

Ամենքին յայտնի է՝ թէ ինչ է մագնական լապտերը։ Այս գործիքում ապակու վրայ ներկած թափանցիկ պատկերի նկարը քցուում է երկակորնթի ապակու վրայ, որը յատկութիւն ունի իւրեան վրայ որոշ կերպով ընկնող բոլոր ճառագայթները ժողովելու՝ մի կէտի մէջ, որը կոչուում է վառարան կամ կիզարան։ Ճառագայթները անցնում են այս կէտի միջով և շարունակում են այս ճանապարհը հեռու ցրիւ գալով այս կէտից իսկ այնպէս, ինչպէս առաջ նրանք այս կէտում հաւաքուում էին։

Այս կերպով կիզարանի հետևը կերպաւորուում է ճառագայթների մի կոն, որի գագաթը գտնուում է այս կիզարանում։ Եթէ քցենք նրան պատի վրայ, վերջինիս վրայ երևան է գալիս թափանցիկ պատկերի նկարը դարձած ձևով, այնքան առաւել մեծ, որքան պատը հեռու է կիզարանից։ կոնի իւրաքանչիւր հատուածը տալիս է նախկին պատկերի սոյնանման դարձած նկարը։

Եթէ երկակորնթի ապակին, որից օգտուում են այս նկարը ստանալու համար՝ յղկած լիներ մաթեմաթիկական ճշտութեամբ, և պատը լիներ լիովին հարթ, մնտեցնելով լապտերը պատին այնքան, որ ապակու կիզարանը ընկնէր պատի մակարդակի վրայ, մենք այս պատի վրայ կստանայինք այս կիզարանը լուսաւոր անբաժանելի կէտի ձևով։

Ա յս միակ մաթեմաթիկական կէտում պարփակուած է պատկերի ամբողջ մակարդակը և այս անբաժանելի կէտից նորից ցրիւ է գնում ամբողջ պատկերն, եթէ հեռացնենք լապտերը պատից։ Այսպէս պատկերի ամբողջ գունազան մակերևոյթը բոլոր բաղադրիչ մասերով, տարծդի, առանձին ձևերի, գոյնի մասերով, մի խօսքով ամբողջ պատկերը՝ արդարև և իրապէս՝ պարփակուում է այս անբաժանելի կէտում, պատկերը մենք ժողովեցինք այս կէտում, օգտուելով լուսոյ բեկումից, և այս կէտից նա նորից ցրիւ է գնում։

Ուրեմն մենք այստեղ ակներև տեսնում ենք, թէ ինչպէս անբաժանելի կէտը կարող է պարունակել տարբեր մասեր, որոնք մեր հասկացողութեամբ տարածութեան մէջ անհրաժեշտ կերպով բաժանուած են և տեսիլոյթս մենք գտնում ենք հակաճառութեան մէջ տեսանելի և անհերքելի հասկացողութիւնների հետ։

Ա յս հակաճառութեան լուծումն այն ճանապարհի վրայ է, որի զարգացումը ներկայ դատողութեան նպատակն է։ Մենք ուզեցինք ցոյց տալ, թէ կարելի է հասկանալ աշխարհս կամ տարածութիւնը, որքան մենք ըմբռնում ենք սրան մեր զգացութիւններով, իբրև մի բան, որ չունի ոչ չափսեր, ոչ այն տարբերութիւններն, որոնց վրայ մենք նրան արտհում ենք, և որոնք մենք տեսնում ենք նոցա մէջ, և թէ բոլոր նոցա ընդարձակութիւնն և բոլոր տարբերութիւնը միայն մարդու հայեցակէտի մէջ է, և պայմանաւորուած են մարդու հասկանալովը։ Ցիրաւի՝ եթէ մի մակերևոյթ, որ ունի սիրուելիութիւն, կարող է կէտ դառնալ, ինչպէս մենք տեսանք մագական լապտերի օրինակի մէջ, և եթէ այս կէտը կարող է պարունակել մակերևոյթի բոլոր բազմազանութիւնը բոլոր մասերը սրանով իսկ ապացուցած է, թէ այս բազմազանութիւնը, որ ներկայանում է մեզ իբրև զանազան առարկաների՝ տարածութեան մէջ եղած՝ գոյութիւն, ոչ մի կերպ կապուած չէ անհրաժեշտօրէն տարածութեան ընդարձակութեան հետ, և թէ մի մաթեմաթիկական կէտն էլ կարող է պարունակել բոլոր այս բազմութիւնը։

Իսկ եթէ, այսպիսով չպէտք է մակերևոյթին ոչ մի չափս առ-գրել, որպէս զի հասկանանք իւր վերայ եղած մասերի համա-գոյակցութիւնը, սրանով իսկ ընդարձակութեան էութիւնը ոչնչանում է և կէտը զատնում է հաւասար իրաւունք ունեցող մակերևոյթի հետ, որովհետև առաջինը կարող է պարունակել վերջինի մէջ եղած պարունակութիւնը, և միայն երբ մենք ուշ-դում ենք տեսնել այս պարունակութիւնը մարդկային աչ-քերով, մենք պէտք է վերադառնանք մակերևոյթին և դուրս բերենք այս կէտից այն կերպարանքները, որոնք սորա մէջ հա-ւասքուած են:

Այսպիսով մենք ցոյց տուինք այնպիսի մտապատկերի կա-րելիութիւնը, որով տարածութեան ընդարձակութիւնն է միայն միջոց զգայարար ըմբռնելու այն բանը, ինչ որ կարող է պարունակուած լինել մէկ անբաժանելի կէտում: Այս-րինակ հայեցակէտի կարելիութիւնն ունի մեզ համար այն պատճառով անգնահատելի նշանակութիւն, որ մենք այսպի-սով անվիջապար կարող ենք հասկանալ Կանտի միտքը, որը նա արտայայտել է յայտնի ստացուածի մէջ՝ թէ պատճա-ռը է դէպի տրդիկային ըմբռնողութեան մի փոքոչ:

Սրանով վերջացնում ենք այն բանի ապացուցութիւնն, ինչ որ ի նկատի ունէինք. մենք ցոյց տուինք, թէ կարելի է կանգ-նել այնպիսի հայեցակէտի վրայ, որով ոչ ժամանակն, ոչ տա-րածութիւնը կարևոր չեն տիեզերքի գոյութիւնը հասկանալու համար: Բայց որովհետև մեր մարդկային հայեցակէտը, որը ենթադրում է ընդարձակութիւն ու բազմազանութիւն իբրև աշխարհի անհրաժեշտ յատկութիւն, հասցնում է հակաճա-ռութիւնների, ուստի մենք պէտք է վնտռենք մի այլ հայեցակ-այս բանի վրայ, և մեզ հասկանալի են լինում գոնեա՝ այս-պիսի հայեցակի կարելիութիւնը և ժառանգելիութիւնը, թէև մենք երբէք կարողանալու չենք դնել աշխարհն այս հայեցա-կէտից. բայց և այնպէս այստեղ և միայն այստեղ մենք ու-նինք կարելիութիւն հասկանալու այն ճշմարտութիւնը, թէ ամբողջ աշխարհս ձագո՞ է մեզ ապրելու համար:

Որովհետև, որքան յայտնի է, ոչ մի տեղ չէ եղել ցոյց տուած ակներև ու հաստատուն ճանապարհ տիեզերքի վրայ այսպիսի հայեացք ունենալու համար, ուստի մենք էլ վճռեցինք հրատարակել մեր խորհրդածութիւնները, որոնք՝ կարելի է կդրդեն ընթերցողներին խորհել այս՝ մեր բարձրացրած հարցերի վրայ, և ինքնուրոյնաբար զարգացնել և աւելի մեր մեկնաբանած գաղափարները։

Երկ Էբերտի. Թարգմ. Բ֊ժ. Մ. ԶԱՐԳԱՐԵԱՆՑ.

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ

(Շարունակութիւն)

ԼՋ

Սթեփաննոս եպիսկոպոս Օրբէլեան. Նորա փոհանայանալը, կենիկ գնալը և եպիսկոպոսանալը. Դարձ և նուիրապետութիւն։ Խաւարութիւն նորայայտ ծէսերի առնիւ. Անապատեայ Գրիգոր եպիսկոպոսի կանոնագիրքը։ Սորան ողջիկայ բնաղիը Սիւնեաց ժողովի կոչիչ։ Սթեփաննոս եպիսկոպոս Օրբէլեանի գրական աշխատութիւնները. նորա ընդհմ, մահուան տարին և հասակը։ Յոհաննէս եպիսկոպոս Օրբէլեան։ Պետրոս ընէզ Օրբէլեանի խնդիրն և Ֆարեայի ջահի հրուելուքը։ Նորա վանից էնէզեցոց ընդառաջ վիճակը։ Վանից հաղորդչին սեփականացնելու փոյթը։ Քահանայ վանահայրք։ Մենաստանի վերջակէտը։

Նորավանքի պատմութեան շարունակութիւնը նախընթաց գլխում հասաւ մինչև Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանի օրերը։ Մենք տեսանք, որ Յոհաննէս եպիսկոպոս Կապանեցուց մինչև Օրբելեանը, 180 տարի, եպիսկոպոսներ յաջորդաբար

ժառանգեցին Նորավանքի աթոռը։ Առաջինն եղաւ յիշեալ Կապանեցին, երկրորդը՝ Մաթևաննոս եպիսկոպոս Մեղրեցին, երրորդը՝ վերջինիս քեռորդի Սարգիս եպիսկոպոսը. չորրորդը՝ վերջինիս քեռորդի միւս Մաթևաննոսը և հինգերորդը՝ Վահրամ Ձգնաւորի որդի միւս Սարգիս եպիսկոպոսն, որի ժամանակ ձեռնադրուեց Օրբելեան նախ քահանայ և ապա մեծապօլիտ Սիւնեաց աշխարհի։

Օրբելեանի բազմարդիւն գործունէութիւնը պատանի հասակից մինչև մահը սերտ կապով ամրացած է Նորավանքի եպիսկոպոսական աթոռի հետ, ուստի անհրաժեշտ է տալ նորան պատկառելի տեղ այդ մենաստանի պատմութեան էջերում։ Նորա աղմկալի գործունէութիւնն եղել է աղմկալի ժամանակ հայ ժողովրդի համար։

Օրբելեանի անունը մեր ընթերցողներից սակաւաթիւներին է միայն յայտնի, բայց որովհետև այդ անձնաւորութիւնն իւր ժամանակին շատ նշանաւոր էր իբրև մեծապօլիտ, իբրև պատմագիր, իբրև հարուստ, իբրև քաջ պաշտպան հայոց եկեղեցու և ազգի շահերի և այլն, ուստի հարկ է կարելոյն չափ երկարօրէն տալ տեղեկութիւն նորա մասին։

Թաթարաց տիրապետութեան ժամանակ Վայոց ձորը և տրյան շրջապատող փոքրիկ գաւառները կառավարում էր հայ Օրբելեանների այն ժամանակի ներկայացուցիչ Սմբատ իշխանը, ունենալով օգնական իւր կրտսեր եղբայր Տարսայիճին։ Տարսայիճը հասակով ահարկու, ուժեղ և արտոյտ մարդ էր, պատերազմող և խիստ կրօնասէր և աստուածապաշտ։ Նա իւր առաջին կնոջից—Արուզ Խաթունից—որ թէև Խմայելական ցեղից՝ բայց քրիստոնեայ էր, ունեցաւ երեք արու զաւակ. Ելիկում, Մաթևաննոս և Փախրադուլայ։

Մաթևաննոսն էր ուրեմն Տարսայիճ իշխանի երկրորդ որդին, որ յետոյ քահանայացաւ, եպիսկոպոսացաւ և իբրև Սիւնեաց մեծապօլիտ գործեց մինչև իւր մահը։ Իբրև Սիւնեաց եպիսկոպոս կամ մեծապօլիտ՝ նա յաջորդեց Եղիազարին, իսկ իբրև Նորավանքի առաջնորդ՝ նա յաջորդեց

Սահմանոսի հօրեղբայր Սմբատ իշխանը իւր վայելուն իշխանական պարծանքի ժամանակ, անզաւակ լինելու պատճառով, մանուկ Սահմանոսին որդեգրեց և պատրաստեց նորան հոգևոր կոչման։ Իբրև ընդունակ մանուկ, իբրև Սմբատ իշխանի որդեգիր և իբրև Տարսայիճ իշխանի հարազատ զաւակ՝ Սահմանոսն ունէր յաջողութիւն կատարեալ ուսում առնելու։

Իւր մասին իւր յիշատակարանի մէջ նա ասում է. «Սնեալ և ուսեալ առ ոտս աստուածարեալ արանց»։ Երևում է որ նա ուսել էր Տաթևի վանքում և դեռ մանկական հասակում, ինչպես ինքն է հաստատում, քահանայացաւ և կղերիկոս կարգուեցաւ ահարկու և աստուածընկալ բեմին։ Նորա աշակերտութիւնը թէպէտ մեզ յայտնի չէ, սակայն նորա հոգևոր կոչման վազահաս հրաւիրուելը և յետագայ ժիր գործունէութիւնը ցոյց են տալիս, որ իւր աշակերտութեան ժամանակն ևս պէտք է լինէր ընդունակ, ժրաջան և յառաջադէմ։

Տարսայիճ իշխանը 729 հայկական թուականին — 1280 — կազմեց ժողով եպիսկոպոսների, վարդապետների և վանականների Նորավանքի մենաստանում, ուր աշխարհախռւմբ հանդիսով քահանայ ձեռնադրել տուեց Սահմանոսին։ Սրանից հինգ տարի անցած՝ եպիսկոպոսները հաւաքուեցին Տարսայիճ իշխանի մօտ և առաջարկեցին Սահմանոսին գնալ Կիլիկիա հայոց կաթուղիկոսի և Թագաւորի մօտ՝ Սիւնեաց աթոռի վերայ մետրապօլիտութեան ձեռնադրութիւնն ընդունելու։

Երիտասարդ Սահմանոս իւր հասակին յատուկ փառասիրական զգացմանց ներքոյ հաճութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը, չմտածելով նշանաւոր պաշտօնի ծանրութիւնն և դժուարութիւնը։ Վերջերում՝ անձամբ փորձելով այդ դժուարութիւնները, Սահմանոսն իւր յիշատակարանի մէջ խոստովանում է. «Յանձն առեալ մեր յիմարութեամբ՝ անգիտացեալ պահարկու և անտանելի լծոյ ծանրութիւն, միայն առօրեայ փառօքն հեշտացայ ախտաւոր մտօք»։

Հասնելով Կիլիկիա, Սահմանոսը մեռած գտաւ Տէր Յակոբ հայոց կաթուղիկոսին, որից պէտք է ընդունէր իւր եպիսկո-

պոսական ձեռնադրութիւնը։ Ուստի հարկադրուած էր ապաւել այն տեղ մինչև նորի ընտրութիւնը և այդ միջոցին Սահմանոսը հիւրասիրուելով հայոց Լևոն Գ. թագաւորի մօտ մեծամեծ պատիւներ էր վայելում նորանից։

Լևոն թագաւորը, որի մօտ երեք ամիս հիւր մնաց Սահմանոս, համոզուած էր նորան, ըստ ասութեան նորա՝ Սահմանոսի, որ մնայ այն տեղ Կիլիկիայում, և նստի հայոց կաթուղիկոսութեան թափուր աթոռը։ Սակայն այս առաջարկութիւնը չէ ընդունել Սահմանոսը։

Հայր Միքայէլ Չամչեան, որ Սահմանոս Օրբելեանի յարգողներից չէր, իր պատմութեան մէջ յիշելով այդ իրողութիւնը, չէ ընդունում Լևոն թագաւորի յիշեալ առաջարկութիւնն, այսինքն բոլորովին չէ յիշատակում, այլ շարայարում է. «կամեցան ապա ընտրել ոմանք զՍահմանոս քահանայն ղորդին Տարսայիճայ, քայց հաբ ժողովոյն քնաս ոչ հաճեցան ընդ այն. նա ասեն այր խրոխտ է՝ և երևի լինել ինքնահաճ»*)։

Վերջապէս Կոստանդին կաթուղիկոսն, որ ընտրուեցաւ Յակոբից յետոյ, ձեռնադրեց Սահմանոս քահանային եպիսկոպոս — մետրապօլիտ Սիւնեաց աշխարհի աթոռի վերայ, իբրև գլուխ այնպիսի եպիսկոպոսների, որոնք կային Սիւնեաց աշխարհի այս և այն տեղ, ոմանք Վայոց ձորում և ոմանք Տաթևում, և որոնք իւրեանց աշխարհի սուրբ Աթոռի հին պատիւը և աստիճանը վերականգնելու նպատակով, ընծաներով և միաբան թղթերով ուղարկել էին Սահմանոսին Կիլիկիա՝ եպիսկոպոսական աստիճանն ընդունելու։

Նորընտիր կաթուղիկոսը նորընծայ եպիսկոպոսին հաղորդեց ասկեթել հիւսուած հայրապետական զգեստ, իսկ գլխին դնելով պատուական թագ, ասկեզէր մագաղաթեայ շրջաբերական նամակով հաստատեց նորան Տաթևի աթոռի վերայ։ Նոյնպէս և Լևոն թագաւորը հաղորդեց նորան հայրապետական ձևի

(*) Չամ. Պատ. Հայ. հ. Գ. էջ 284։

թագաւորական հագուստ. գլխին դրեց ոսկեպատ թագ (միթր). Ապա տալով նորան՝ մետրապօլտութեան աստիճանին յատուկ եմիփորն և մարգարտայեա ոսկեթել խոյր, նոյնպէս և մեծամեծ պարգևներ, և այդպիսի բարձրագոյն փառքով ճանապարհեցին նորան դէպի իւր պաշտօնատեղին, Սիւնեաց աշխարհը, 736—1287 թուականին:

Դառնալով իւր հայրենիք՝ նորապսակ եպիսկոպոսը թէև խնդացրեց հօրը, եղբայրներին և ամբողջ գաւառը, սակայն այս խնդութիւնը երկարատև չեղաւ ոչ աթոռի և ոչ աթոռակալ Ստեփաննոս եպիսկոպոսի համար: Ըստ որում Տաթևի վանքի երկու միաժամանակեայ եպիսկոպոսները, Տէր Հայրապետ և Տէր Յոհաննէս, հակառակեցան երիտասարդ մետրոպոլիտի իշխանութեանը և իւրեանց իրաւունքը պաշտպանելու համար դիմեալ էին թաթար իշխանների միջամտութեան: Ի՞նչ կասկած՝ որ այդպիսի երկպառակութիւնը շատ վնասակար էր Սիւնեաց աթոռի վարչութեան և եկեղեցու անդորրութեան համար:

Հայր Զամչեանը ևս գոյնով է նկարագրում այս հակառակութիւնը և Օրբելեանին չյարգելով՝ բոլոր մեղքը դնում է նորա վերայ, ասելով. «Այլ վասն զի սոյն այս Ստեփաննոս, որ կոչէ զինքն մետրապոլիտ պռօտօֆրօնդէս, որդի մեծի իշխանի էր, սկսաւ մեծամտիլ և յոխորտանօք վարիլ, և անհաւան լինիլ այլոց, և զինիլ ևս ընդդեմ քաղկեդոնականաց, վասնորոյ թըշնամացան ընդ նմա բազում և յարուցին խռովութիւն մեծ*)»:

Սակայն երիտասարդ մետրապօլիտը չընկճուեց անյաջողութեան առաջ: Թաթարաց Արղուն խանին ներկայանալով և ոյոյց տալով կաթուղիկոսի շրջաբերական նամակն, ապացուցեց իւր իրաւունքը Սիւնեաց աթոռի վերայ: Արղուն խանը վերահաստատեց Ստեփաննոս Օրբելեանի եպիսկոպոսական իրաւունքն և առանձին հրամանով վերադարձրեց նորան իւր աթոռը:

(*) Զամ. պատմ. հ. գ. էջ 284:

Վերը տեսանք, որ Սիւնեաց աշխարհի աւերման պատճառով եպիսկոպոսական աթոռը երկուսի էր բաժանուած՝ Տաթեւի և Նորավանքի։ Սահմանոս եպիսկոպոսն միացրեց երկու աթոռները, թողնելով երկու վանքերից իւրաքանչիւրին իւր ունեցած վիճակն՝ ինչպէս կանխիկ հաստատել էին Յակոբ և Կոստանդին կաթուղիկոսները։

Սահմանոս եպիսկոպոսն իւր հօր իշխանութեան ներքոյ եղած վանքերն, իբրև մնայնաւոր ժառանգութիւն, ստացել էր հօրից և վերահաստատել տուել իւր անուան Արղուն խանի կողմից։ Սոքա էին Տաթեւ, Նորավանք, Յազաց քար, Արատիս և այլ շատերը։ Այս հարստութիւնից էր որ Օրբելեանը կարողանում էր նշանաւոր նուիրատուութիւն անել զանազան վանքերի, որոնց ցուցակը բերուած է նախընթաց գլխում։

Իւր մեծարգոյ հովութեան միջոցին Սահմանոս եպիսկոպոսը զբաղուեց զանազան եկեղեցիների վերանորոգութեամբ և կառուցեց Եղէգնիսում (Ալագեազ գիւղ) մի եկեղեցի, իսկ Տաթեւի վանքում սուրբ Գէորգ եկեղեցին, որ երկու անգամ նորոգուելուց՝ նորից քանդուել էր հիմքից։ Նորան աւարտեց և նուիրեց նորան 746 (1297) թուին Արիս գիւղը, որ գնել էր իւր եղբօրից, Էլիկումից։

Այլ և նուիրեց Նորավանքին Զուայ գիւղը, Աբասաշէն, սուրբ Սահակ, Արատեսը, Քարկովը, Նոյնպէս և մի քանի այգի Առվայ գիւղում։ Իսկ Արատեսի եկեղեցիներին յատկացրեց իւր սեփական վիճակից հետևեալ գիւղերը Դեղարքունիքում— Վանեվան, Կեռանոց, Փառագունի, Մշալաշէն, Շիկարբ, Խուլինակ, Քաւթարեանց և Դարբանդ։

Որդեգրելով իւր հօրեղբօր որդուն, Յովհաննէսին, Սահմանոս Օրբելեանը վարժեցրեց ուսման մէջ և երիտասարդ հասակում քահանայացրեց։ Իւր մահից յետոյ սոյն Յովհաննէսը ոչ միայն յաջորդեց Սահմանոսին իբրև Սիւնեաց մեծապօլիտ, այլ լիովին նորա շաւղով ընթացաւ Հայաստանեայց եկեղեցու պաշտպանութեան վերաբերութեամբ իբրև արժանաւոր աշակերտ իւր ուսուցչի և մնուցչի։

Սահմանուս եպիսկոպոս Օրբելեանն Հայաստանեայց եկեղեցու հոգւոյն համեմատ անուաճ և վարժուած լինելով անդորը սրտով և հաշտ աչքով չէր կարող նայել այն եղծումների վերայ, որոնք կատարուում էին նորա օրով Կիլիկիայում Ռուբինեանց հարստութեան ժամանակ։ Իշխանաւորների, ամենց հոգևորականների և նոյն իսկ հայ թագաւորների լատինամոլութիւնն այն աստիճանի էր հասնում, որ լատինական և յունական մի քանի ծէսերի ներմուծութեամբ կամենում էին խախտել Հայաստանեայց եկեղեցու գարևոր սնքրութիւնը։

Գործն այն տեղ հասաւ, որ Յակոբ կաթուղիկոսի մահից յետոյ, 1287 թուին, Լևոն Գ. հայոց թագաւորն ջանք էր գործադրում հաւանեցնել եպիսկոպոսներին և վարդապետներին որպէս զի նոքա համաձայնեն ընտրել Գրիգոր Եպիսկոպոս Անաւարզեցուն։ Բայց ընտրող ժողովի անդամներն որք էին վանականներն և առաջնորդներն, ընդդիմացան թագաւորի աշխատանաց, ասելով որ Անաւարզեցին հոռոմ է։

Երբ մի կողմից, 1289 թուին, Հռոմայեցի պապը Լևոնի որդի Հեթում երկրորդ թագաւորին ժամանակով յորդորում է հասատատ մնալ իւր դիտաւորութեան վերայ, որ իբրև թէ սա կամենում էր միանալ Հռոմայեցւոց հետ, միւս կողմից ուզարկելով թագաւորի մօտ Յովհաննէս լատին կրօնաւորին, խնդրում էր որ թագաւորը յորդորէ հայ եպիսկոպոսներին լսել և ընդունել այդ կրօնաւորի վարդապետութիւնը։

Պապականութեան և յունականութեան մէջ խճճուած Հեթում թագաւորը ոչ միայն հեռացրեց ժողովով Կոստանդին կաթուղիկոսին իւր աթոռից, այլ և սորա յաջորդ Սահմանուս կաթուղիկոսի գերութեան մէջ վախճանուելուց զկնի, նորից յաջողեցրեց Գրիգոր Անաւարզեցուս ընտրութիւնը, 1294 թուին, Կիլիկիայի եպիսկոպոսների հաւանութեամբ։

Անաւարզեցին կաթողիկոսացաւ թէ չէ՝ իսկոյն արաւ այն, ինչ որ նորանից շատ վաղուց սպասում էին, այն է՝ ջուր խառնել բաժակի մէջ, և այլ մի քանի ծէսեր յունական և լատինական եկեղեցուց մուցնել հայոց եկեղեցու մէջ, որով մեծ աղ-

մուկ բարձրացաւ եկեղեցիներուն, վանքերուն, հոգևորականների և աշխարհականների մէջ։

Այս ախուր լուրերը լսելով հեռաւոր տեղում Սեբաստիոյ մետրապոլիտ Օրբելեանն և անձամբ ճանաչելով Անտիոքի և Կիլիկիայի որպիսութիւնները իր ճանապարհորդութեան միջոցին, վրդովուեցաւ և սրտով խոցուեցաւ և վաղօրօք չարիքի առաջն առնելու նպատակով կամ գոնէ արևելեան վանքերը ազատ պահելու համար Կիլիկիայի ձգտումներից, նա — Սեբաստիոյ Օրբելեանը, արևելեան եպիսկոպոսների մէջ իրրև ամենանշանաւորը, փոքր ժողով կազմեց Սիւնիքում (գուցէ Նորավանքում) հոգևորականներից և աշխարհականներից և մի նշանաւոր թուղթ կազմելով, 1294 թուականին, ուղարկեց Գրիգոր կաթուղիկոս Անտիոքեցուն, որպէս զի վերջինս յետ կանգնի իր դիտաւորութիւններից։

Այդ թուղթը Սիւնեաց ժողովն ուղարկեց կաթուղիկոսին կեսարու Կոստանդին եպիսկոպոսի ձեռքով, որ նուիրակ էր եկել արևելեան աշխարհը Անտիոքեցու կողմից։

Յիշեալ թուղթը լուրջ հաւանութեամբ և հաստատ համոզմամբ ստորագրեցին, բացի Սեբաստիոյ Օրբելեանից, այլ և Նորավանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոս, Տաթևի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս, Բջնոյ աթոռակալ Յովհաննէս եպիսկոպոս, Հախպատի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոս, Հաւուց թառի Մխիթար եպիսկոպոս, Դսպրան գաւառի Սարգաւակ եպիսկոպոս, Գրիգոր վարդապետ Բջնու, Մարգարէ վարդապետ եղբօրորդի Վանական վարդապետի, Դաւիթ վարդապետ Այրարատայ, Նայի վարդապետ (իր աշակերտների կողմից և)։ Իսկ կողմնակալ իշխաններից ստորագրեցին Ռշտունի իշխանի որդի Պապաքը, որբա որդին Էալի (իւրեանց ազատների կողմից և) նոյնպէս Սեբաստիոյ Օրբելեանի մեծ եղբայր իշխան Ելիկումն և որբա հօրեղբօր որդի Լիպարիտն (իւրեանց եղբայրների, որդոց և բոլոր ազատների կողմից և)։

Թղթի վերջումն Սիւնեաց ժողովը շեշտում է հետևեալ զօրեղ խօսքերը. «Ի՞նչ երկարացնենք մեր խօսքերը, ընդ հա-ան

ենք մեզ նախահայրերէն հեռ պահոյն էլնել, քան հոռոմներէն հեռ էրկնք քաշչյանալ»։ Այս խօսքերը դարձրած էին Գրիգոր Կաթուղիկոսին, որոնց վերայ աւելացրած էին և այս. «Ապա եթէ աւելի ինչ կամ պակաս կամիք մուծանել յեկեղեցիս մեր զոր ոչ ունիմք ի հարցն և կամ գրեալքս խոտան են առ ձեզ, յայնժամ մի աշխատ լինիք և մի զմեզ աշխատ առնէք. ըստ ձեր կամաց լիցի աշխարհդ այդ (այսինքն Կիլիկիան) և այլ ոք որ կամիցի. և զմեզ թողէք ի մեր սարուկ գերութեանս. և մեք կացցուք, մնասցուք ակն ունելով վերին այցելութեան։ Եւ ընդ նոգեւոր-ական սոսկաց պարծէք զնէք, մեք պարծիմք ի քանզան, յաւո-րս և ի բանս, ի ճահ և ի նեղութիւն ի վերայ սո-ըբ և առաքելական հարցն սուանդից. և այլն *)։

Հայր Զամչեան, որ առելով առում է Սահմանիոս Օրբելեանին, արտագրելով իւր պատմութեան մէջ թղթի վերջին կտորը չէ յիշատակում առաջին նօտարատառ պարբերութիւնը, իսկ վերջին նօտարատառ խօսքերը դուրս է կորզում թղթի վերջից, թէպէտ և շարունակում է հատուածի բովանդակութիւնը մինչև թղթի վերջին կէտը։

Սահմանիոս եպիսկոպոս Օրբելեանը միայն վերոյիշեալ թղթով չգոհացաւ։ Անաւարզեցու նորաձեւութիւնների վերայ նա հալուում մաշուում էր և լերդախոց լինում գիշեր և ցերեկ։ Մի առանձին թուղթ ևս գրեց նա կաթուղիկոսին վերոյիշեալ ուղղութեամբ և 1302 թուականին շարադրեց մի գրքոյկ յունաց դաւանութեան վերայ, որի մասին Օրբելեանի բարեացակամ հայր Զամչեանը նկատում է՝ «յորում ոչ այլ ինչ տեսանի ճշմարտասէր ընթերցողաց, բայց եթէ սղճատանք սուայօդ բանից և անոտի զրոյցք ազիտական ճառից» **)։

Նոյն հեղինակը գրել է ոտանաւորով և մի ողբ սուրբ էջմիած-

(*) Օրբ. Պատմ. գլ. կԹ. և Զամչ. Պատմ. Հայոց հ. Գ. էջ 291. ևս և Օրբ. Հակաճառութիւն ընդդէմ Երկաբնակաց. կ. Պոլիս, ՌՄԵ. (1756) էջ 185—6։

(**) Զամչ. Պատ. Հայոց հ. Գ. էջ 292։

նի վերայ Կեչառեցի Թաչատուր վարդապետի խնդրանքով։

Բայց Սեբաստիոս եպիսկոպոսի գործոց գլուխն հայկական գրականութեան մէջ կազմում է նորա՝ Սիւնեաց աշխարհի պատմութիւնը. «Պատմութիւն Նահանգին Սիսական», վերնագրով, որի նիւթը ժրաջան հեղինակը ժողովել է մեծ աշխատութեամբ հայոց հին և նոր պատմագրերից, եկեղեցիների արձանագրութիւններից, հնագոյն նամակներից, որոնք եղել են Տաթևի պահարաններում, և վերջապէս աւանդութիւններից։

Յիշեալ պատմութեան մէջ՝ տարաբաղդաբար բաց է մնացած այն ժամանակի գիւղաքաղաքների, աւանների, գիւղերի, վանքերի, բերդերի և այլ շինութեանց և տեղերի աշխարհագրական դրից նկարագրութիւնն, որով դժուարանում է, շատ անգամ և անհնարին է լինում, գտնել այժմ այս կամ այն անհետացած կամ անուանափոխուած տեղը և այլն։

Այդ պատմութիւնն, որ բովանդակում է իւր մէջ գլխաւորապէս Սիւնեաց աշխարհի անցքերը Տրդատ Թագաւորի և Գրիգոր Լուսաւորչի օրերից մինչև տասներեքերորդ դարի բոլորովին վերջը, գրուած է Ամաղուի Նորավանքում, Թոթարաց Արղուն խանի որդի Ղազան խանի այս աշխարհում Թագաւորութեան ժամանակ, իսկ Ռուբինեան Լևոն Գ. Հեթում Բ. Թագաւորի օրով և վերջացրած է ուղիղ 1299 Թուականին*)։

(*) Օրբելեանի յիշեալ պատմութիւնը տպագրուած է Մատթէոս կաթուղիկոսի օրով « » Թուականին, հանգուցեալ Շահնազարեան կարապետ վարդապետի աշխատութեամբ, յառաջաբանով և 292 ընտիր ծանօթութիւններով։ Նոյնը լոյս է ընծայել Մոսկվայում 1861 Թուին գիտնական Մկրտիչ Էմին առանց ծանօթութիւնների և կրում է հետևեալ վերնագիրը. «Սեբաստիոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսական»։

Այս պատմութեան ԿԶ. գլուխն իբրև ոմն Մեսրոբ քահանայի շարադրութիւն տպագրուած է 1775 Թուին Պարսկաստանի Մադրաս քաղաքում այս վերտառութեամբ. «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց»։

Նոյն գլուխն առանձին գրքոյկով «Սեբաստիոս Արքեպիսկոպոսի Սիւնեաց պատմութիւն» լոյս է ընծայել 1858 Թուին Մոսկվայում Ոսկան Յովհաննիսեանցը, Սեբաստիոս Գուլամիրեանցի ծախսով։

Բազմավաստակ և ժրաջան Սահակիանոս Օրբելեանը, 16 տարի արիւնթեամբ կառավարելով Սիւնեաց աշխարհի ընդարձակ թեմը մի դժնդակ և արհաւիրքով լի պատմական շրջանում, կնքեց իւր արդիւնաւոր կեանքը 752—1303 թուականին դեռ եռանդալից հասակում և թաղուեց Նորավանքի սուրբ Նախավկայի եկեղեցու գաւթում, Սմբատ իշխանի կառուցած ժամատան մէջ, ուր այժմ նորա շիրմի մարմարիոն տապանաքարի վերայ արձանագրած է. «այս է շիրիմ Հանգստեան մեծի Մետրոպոլիտ Սիւնեաց Սահակիանոսի», ինչպէս արդէն յիշել եմ նկատողութեանց Խդ. գլխում:

Մինչև այսօր ինձ պատահած չէ մի պատմական աղբիւր, որ ցոյց տար Սահակիանոսի Հանգստեան տեղը և մեր բանասէրներից՝ Հայր Միքայէլ Չամչեան, Կարապետ վարդապետ Շահնազարեան, Մկրտիչ Էմին, Սարգիս եպիսկոպոս Ջալալեան, Ոսկան Յովհաննիսեան, Կարապետ Կոստանեան և այլք, որոնք քիչ թէ շատ խօսել են Օրբելեանի մասին, ոչ ոք չէ ցոյց տուել նորա գերեզմանի տեղը: Բայց վերոյիշեալ տապանագիրը տեղիք չի տալի երկբայելու Սահակիանոսի գերեզմանը Նորավանքում լինելու համար: Այստեղ և պէտք է լինի՝ քանի որ Օրբելեանց տոհմի բոլոր անդամոց դամբարանը Ամաղուի Նորավանքն էր:

Ուրեմն թող լինի պապական էջող-ընէն, որ Սահակիանոս Օրբելեանի նշխարները Հանգստանում են Ամաղուի սուրբ Նախավկայի տաճարի արևմտեան դրան առաջ, Սմբատի ժամատան մէջ, այն մարմարիոն տապանաքարի տակ, որ յատակակի ընկնում է ժամատուն մտնողների ոտաց տակ. (գլ. Խդ.):

Սահակիանոսի մահուան տարւոյ մասին նոյնպէս տարբեր կարծիքներ կան, որոնց հիմունքները ինձ յայտնի չեն: Հայր Չամչեան*) ընդունում է 753 հայկական կամ 1304 վրկչական թուականը: Ոսկան Յովհաննիսեան**) հետևելով Չամչեանին՝

(*) Չամչ. պատմ. Հայոց հ. Գ. էջ 292:

(**) Յովհան. պատմաբերին Օրբելեան Մոսկվա. 1858 թ. յառաջաբան:

ընդունում է վերոյիշեալ թուականը։ Իսկ Կ. Կոստանեան*) ընդունում է 1305 թուականը։

Սակայն Խդ. գլխում արտագրած Ստեփաննոս եպիսկոպոսի տապանաքարի թուականը ՉԾԲ.—752 ապացոյց է որ յիշեալ հեղինակները ճիշդ չեն իւրեանց կարծեաց մէջ։ Ուրեմն ըստ տապանագրութեան՝ Ստեփաննոս Օրբելեանը կնքել է իւր մահկանացուն 1303 փրկչական թուականին։

Այս բոլորից յետոյ ծագում է մի խնդիր Լա. որ հասակում զրկուեց կեանքից մեր պատմագիրը։ Կամ այլ խօսքերով երբ է ծնուել նա։ Ահա մի հարց որ բաց է մնացել վերոյիշեալ բոլոր հեղինակների կողմից։

Նորա ենթադրական լուծումն ես կամենում եմ որոնել նոյն Օրբելեանի պատմութեան և վանքերի արձանագրութեանց մէջ։ Նորավանքի Նախավկայի եկեղեցու պատի մի արձանագրութեան մէջ**) Լիպարիտ Օրբելեանը հայոց 670 թուականին, արևշատութիւն է խնդրում իւր որդուց շարքում և կրասեր որդու, Տարսայիճի, Ստեփաննոս Օրբելեանի հօր համար։ Ուրեմն 670 թուին Տարսայիճն արդէն ծնուած էր։

Պատմութիւնից ու Տարսայիճի սեփական տապանաքարից ճիշդ յայտնի է, որ նա մեռաւ 739 թուին այն է 1290 փրկչական թուականին։ Եթէ նորա հասակն ընդունենք ութսուն տարեկան, նա ուրեմն 670 թուին կլինէր 10 — 11 տարեկան։ Ցաղացքարի (Վօշավանք) սուրբ Կարապետի եկեղեցու պատի վերայ մի արձանագրութեան մէջ***) Տարսայիճը 700 թուականին յիշում է իւր ամուսնուն, Մինա խաթունին։ Ուրեմն նա այդ ժամանակ արդէն ամուսնացած էր այդ իշխանուհու վերայ։

Բայց չէ՞ որ Տարսայիճը Մինա խաթունի հետ միասին ունէր

(*) Կոստան. Ողբ ի Ս. Կաթուղիկէն. Թիֆլիզ 1885 թ. յառաջաբան.

(**) Զալալ. ճանապ. հ. Բ. էջ 174.

(***) Զալալ. ճանապ. հ. Բ. էջ 161.

և մի ամուսին և՝ Արուզ խաթունն, որի հետ նա շատ առաջ պսակուել էր։ Ննթադրելով որ նա պսակուեց Արուզ խաթունի հետ 30 տարեկան հասակում, ուրեմն առաջին ամուսնութիւնը նորա պէտք է լինէր 8 — 10 տարով երկրորդ ամուսնութիւնից կամ 700 թուականից առաջ։

Տարօսյիճն Արուզ խաթունից ունեցաւ կարգով երեք որդիք՝ Ելիկում, Ստեփաննոս և Փախրադօլա։ Եթէ ենթադրենք որ անդրանիկ և երկրորդ որդիք ծնուելեան մինը միւսից հինգ տարի յետոյ, այն ժամանակ կերևի որ մօտ 700 թուին արդէն ծնուած էր Ստեփաննոսը։

Սորա հօրեղբայր Սմբատ իշխանն ունզաւակ լինելով՝ որդեգրեց Ստեփաննոսին և տուեց նորան ուսման «ի հրահանգս քահանայութեան»։ Սմբատ իշխանն այդ արաւ իւր իշխանավարութեան շրջանում, այն է 700—722 թուին, երբ Ստեփաննոսը հաւանականօրէն պէտք է լինէր 15—20 տարեկան։

Հետևաբար, երբ 729 թուին Նորաւանքի ժողովում Ստեփաննոսը կոչուեց քահանայութեան, այդ ժամանակ նա պէտք է լինէր 25—30 տարեկան։

Ճիշդ է, Ստեփաննոսն իւր վերաբերութեամբ ասում է «Հանէկան պէս կարգեալ կղերիկոս ահարկու և աստուածընկալ բեմին», բայց մանկական տիօք, իմ կարծիքով, չէ հակասում իմ ենթադրութեանը, ըստորում մանկական տիօք պէտք է հասկանալ երիտասարդ հասակ։

Նոյն իսկ Ստեփաննոսն իւր Փախրադուլա. եղբօր մահուան առթիւ ասում է, որ նա մեռաւ ի զարդ և ի գեղ հասակի, մինչ տեգ մօրուացն վաղվեսաւ լինէր թխատիպ տեսակաւ շուրջ բոլորեալ զպատշաճագեղ ծնօտիւք և այլն։ Այն ինչ այս թուի մօրուսաւոր, ուրեմն մօտ 25 տարեկան մեռած Փախրադուլայի տապանաքարի վերայ գրած է «հրաշագեղ Հանէկան և քաջազուարթ երիտասարդին»։

Հետևաբար եպիսկոպոսական աստիճանին ստանալու ժամանակ, 736 թուին, Ստեփաննոսն էր 32—37 տարեկան։ Այնուհետև՝ Սիւնեաց ընդարձակ թեմը 16—17 տարի կառավարե-

լուց յետոյ, մեռաւ 752 թուին, ուրեմն 50 — 51 տարեկան հասակում: Սոյն ենթադրութեան հիման վերայ հաւանական է ընդունել, որ Ստեփաննոս Օրբելեանը ծնուած է մօտաւորապէս 698—700 հայոց թուականին: Եթէ այս ենթադրութիւնը 1249/50
մօտիկ չէ ճշմարտութեան, շատ ևս հեռու չէ կարելի ընդունել նորան:

Ես այսպէս որոշելով հեռանգալից, արդիւնաւոր, գործունեայ Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանի հասակը, մահուան տարին և գերեզմանը, ես խոնարհութեամբ համբուրում եմ մեծարանաց արժանի ոսկերոտեաց շիրմաքարը և վերջացնում եմ ընդ միշտ իսօսքս այս անձնաւորութեան վերայ:

Անձանձիր եպիսկոպոս Օրբելեանին յաջորդեց նորա ձեռնասուն և ազգական Յովհաննէս եպիսկոպոս Օրբելեանը: Սնուած և կրթուած իւր նախորդի ուղղութեամբ, այս եպիսկոպոսը իւր ամբողջ գործունէութեան մէջ չշեղուեց իւր ուսուցչի շաւղից: Սորա օրով դեռ ևս կենդանի էր և գործում էր վերոյիշեալ հայոց կաթուղիկոս Գրիգոր Անաւարզեցին, որ 1305 թուին, հաւատի վերաբերութեամբ գրած թուղթը արևելեան եպիսկոպոսների կարգում առաջինը սոյն Օրբելեանին ուղարկեց: Բայց Յովհաննէս եպիսկոպոսը իւր անկարողութիւնը այդ խնդրում յայտնեց թղթով Գրիգոր կաթուղիկոսին և յանդիմանեց Զաքարիա եպիսկոպոս Ծործորեցուն, որ առանձին եռանդով սկսել էր մոցնել հայոց եկեղեցու մէջ կաթուղիկոսի առաջարկած նորաձևութիւնները:

Իւր ուղղութեան համար Յովհաննէս եպիսկոպոսը նոյնպէս հաճելի չէ հայր Զամչեանին, սակայն վերջինս այնուամենայնիւ չէ ուրանում եպիսկոպոսի առաւելութիւնները՝ ասելով թէ «էր ինքն երևելի և բանի նորա անուանին բազում ի բնակչաց մեծին հայոց»: Զամչեանի ասելով Յովհաննէս եպիսկոպոսը վարում էր միանգամայն և մարմնաւոր իշխանութիւն Սիւնեաց աշխարհում: Վերջին հանգամանքը գուցէ չափազանցեցրած է ոտկուն պատմաբանի կողմից, ըստ որում Յովհաննէսի օրով գոնէ Վայոց ձորի սահմաններում կողմնակալ և իշխանաց իշ-

խան էր Բուրթել Օրբելեանը։

Յովհաննէս եպիսկոպոսը իւր իշխանավարութեան ժամանակ կառուցեց մի սիրուն սրբատաշ և նրբաշէն եկեղեցի Առվայ գիւղում, որը դեռ և այժմ մասամբ կանգուն է։ Նա մեռաւ 1324 թուին և թաղուեց Նորավանքի տոհմական դամբարանում Ստեփաննոս Օրբելեանի կողքին։ Նոր մարմարիոն տապանաքարի վերայ գեղեցիկ վրացագրութեամբ գրած են հետևեալ ազդու խօսքերը. «Տուն իմ սասից և հանճարոյ Օրբել Յովհաննէս հռչակաւոր մետրոպոլիտ Սիւնեաց»։

Այս տեղ ահա կարուում է Ամաղուի Նորավանքի պատմութեան թելը։ Բայց այս ընդհատումը միայն մեզ համար է, իսկ վանքի կեանքը վատ թէ լաւ ընթացել է իւր հանապարհով։ Եղել են այստեղ և եպիսկոպոսներ և միաբանութիւն և այլն։ Ասածիս ապացոյց կարող է լինել այն, որ 1569 թուին ամն եղիշայ եպիսկոպոս մի խաչքար է կանգնեցրել իւր հօրեղբօր Առաքել եպիսկոպոսի հոգւոյ փրկութեան համար։ Սմբատի ժամանան տապանաքարերի շարքում մինը 1571 թուից պատկանում է Առաքել եպիսկոպոսին։

Սորանից յետոյ Նորավանքում այլ և այլ չենք գտնում ոչ մի արձանագրական տեղեկութիւն։ Մեղանից մօտ ժամանակում, այն է Պարսից շահ Մահամմատ շահի օրով և յետոյ Նորավանքը և ամաղու գիւղը եղել են Օրբելեան տոհմի վերջին մնացորդաց մի քանիսի ձեռքում և գիւղի հողային բերքերի հասոյթը յատկացրած է եղել վանքին։

Սակայն այս իրաւունքը սակաւ առ սակաւ խախտուելով և խանգարուելով Օրբելեանք ազատօրէն չէին տիրում գիւղին և վանքին և վերջինս հետևաբար զրկուում էր եկամտից՝ մինչև որ 1813 թուականին Օրբելեանի խնդրանօք Պարսից Ֆաթհալի շահը իւր բարձրագոյն հրովարտակով կրկին վերահաստատեց գիւղը Օրբելեանների վերայ և նորա հակամուտը վանքին։

Այստեղ յիշատակում եմ նախ Օրբելեանի խնդրի և երկրորդ Ֆաթհալի շահի հրովարտակի պատճէնները պարսկերէնից հայ թարգմանութեամբ։ Իսկականը ես անձամբ տեսել եմ Հին Նա-

իջևանում Օրբելեանների մի անդամի (Անդրէաս) մօտ, իսկ թարգմանութիւնն ինձ համար արել է նոյն քաղաքացի Կասիմ բէգ Վահրիրովը։ Ահա պատճէնները։

«Աստուածային զօրութիւն ունեցող, Աստուածային շուքանման և տիեզերքի ոգիները զոհ ընդունող Նուրբ թագաւորի ծիրկաթին չափ բարձրութեան առեներին՝ և արքայական պալատի շէմին, բոլոր մարդկանցից նուաստիս խնդիր»։

«Նուաստ Պետրոս բեգ Մելիք Սամ բէգի Օրբելեանից, որ այժմ նուրբ և ամեծ վսեմութեան ասպանդանակ բռնող սարուկների (թիկնապահ) կարգումն է և ուր նա պատրաստ է զոհել իւր անձը, Ո՞ր շնորհալի ոտից հողին զոհ լինելիք»։

«Ամաղուի գիւղի կարմիր վանք (Ղզլվանք) եկեղեցին, որ մեր, այս Ձեզ համար աղօթարարներիս, նախնեաց շինութիւնն է և որ Սաֆաւի տոհմի թագաւորներից դրախտաբնակ Հանգուցեալ Սուլթան Աղայ Մահմմադ շահի ժամանակից հրամաններով և հրովարտակներով յատեռեան այս թշուառականների ձեռքումն էր, այժմ՝ ի սրտէ ծառաներիդ յանկութիւնն է, որ բարձրագոյն դիվանատանից հեռևի աստուածազօր և արեգակնապայծառ արքայական հրովարտակ, որպէս զի նոքա, Կըզըվանք եկեղեցին և յիշեալ գիւղը, նախկին հրամաններին համաձայն, լինին նուաստ սարուկներիդ ձեռքումն և ոչ մի մարդ չվատահանայ ձեռք զարկել նորանց, ինչպէս և առաջ։

«Սորանով մենք կարող էինք պահպանել յիշեալ եկեղեցին, որի վերայ, ինչպէս նախնի ժամանակներում, այժմ և նորից ծախսուէին Ամաղու գիւղի հողային բերքերի օգուտները, որով կկրնինք Ձեր մշտնջենական պետութեան աղօթարար»։

Պետրոս Օրբելեանի խնդրի վերայ գրած է Շահ-Թահմասպ շահի հրո-

վարտաին, որի սկզբի վերայ դրոշմած է նորա պետական կնիքը։ Հրովարտակի պատճէնը հետևեալն է.

«Յանուն ամենաբարձր»

«և ամենողորմած Աստուծոյ»

«Սաֆաւի հարստութեան պատկանող դրախտաբնակ Ազայ Մահամմադ շահի փառաւորները և հրամանները դիտողութեան առնելով յայտնագործուեց, որ Կարմիր վանք մենաստանը Ամաղու գիւղի մօտ կազմուած էր բարձրաստիճան, նուաստ Մելիք Սամբեգ Օրբելեանի որդի, անկեղծ և հաւատարմագոյն Պետրոս բէգի նախնեաց ժառանգական սեփականութիւն։

Որովհետև շատ տարիների ընթացքում, Նախչուան—Դարալագեազ մնալի յիշեալ գիւղի բոլոր եկամուտը ժողովուել և յատկացուել է Կարմիր վանք մենաստանին, վասնորոյ մեր բարձրագոյն բարեհաճութիւնը սահմանում է բարձրաստիճանի պրոտութեան վերայ։ Նախկին հրովարտակներին համաձայն՝ Ամաղուի Կարմիր վանքի իրաւունքը մենք բարեհաճում ենք սեփականացնել բարձրաստիճան Մելիք Սանբէգի որդի հարազատ, բոլոր հոյերից նախամեծար Պետրոս բէգին։

Նա իւր երկու բարձրաստիճան եղբայրների, Խոսրան բէգի և Գեղիշ Կարաբէգի հետ միասին, ինչպէս առաջ, նոյնը այժմ և յաւիտեան ազատ են պետական ամենատեսակ հարկերից և էօզ բէգհանների աղնուականների և մեծամեծների կողմից յառաջացած պատահարներից։ Եւ այս նորա համար է որ նոքա յիշեալ գիւղի բոլոր եկամուտը դարձնելով վանքի օգտին, կարողանան խաղաղութեամբ աղօթել այս պետութեան մշտնջենական յարատևութեան համար։

«Վասնորոյ՝ իմ հարազատ որդին, աչքիս լոյսը, հռչականուն և աստղափայլ գահակոչանգ Աբաս—Միրզան, համօրէն Ատրպատականի հրամանատարը կհրամայի Ատրպատականի բոլոր մեծամեծներին չպահանջել յիշեալ բարձրաստիճաններից նաև ոչ մի գնումք հարկ։ Եւ Ամաղուս գիւղի ամբողջ եկամուտը կյատկացնի բարձրաստիճան Պետրոս բէգին, որպէս զի նա իբրև քանիւր տարի զաճնի այդ եկամուտը վանքի օգտին»։

«Հրամայագրվում է բարձրաստիճաններին, ազնուականներին, նախամեծարներին, պալատականներին և բարձր Սոփաներին մտցնել այս շնորհածիր հրովարտակն երկրի բոլոր մասերների մէջ և պահպանել իբրև ձեռնարկ»։

«Գրուած է Ռաջաբ ալ Մուրաջաբայ ամսում 1229 թուականին»։

Հրովարտակի տակ ստորագրութիւնների փոխարէն դրշմած են փաստնվէց կնիք, կրելով իւրեանց տիրոջ անուանները, որք են Մհամմադ, Իսմայիլ, Մհամմադալի, Մեհդի, Ալի և այլն։

Այս հրովարտակից պարզ երևում է, որ Ամաղուի եկամուտը սահմանափակ է եղել Նորավանքի վենատունը և այդ իրաւունքը էջմիածնի հոգևոր վարչութիւնը հաւանականօրէն ձեռքից չէր թողնիլ՝ եթէ յիշեալ հրովարտակի գոյութիւնը յայտնի լինէր նորան։ Վանքապատկան կալուածքը այժմ մասնաւոր մարգու սեփականութիւն է, ինչպէս շատ անգամ յիշուած է նախընթաց գլուխներում։

Այժմ Նորավանքը ոչ միայն չունի սեփականութիւն կամ եկամուտ, այլ նոյն իսկ վանքը գտնուում է այլոց կալուածքի մէջ։ Ամաղու գիւղը մուլքագարական իրաւունքով պատկանում է Երևանաբնակ Սահփանոս Եղիազարեանցի ժառանգներին։ Իսկ գիւղը, հողը և վենատան շրջակայքը լինում են նոյն գիւղի թուրք բնակիչների ձեռքում։

Այս է պատճառը, որ այդ թուրքերը, 1857 թուից առաջ և յետոյ ոչխարանոց էին գարձրել հնչակաւոր Նորավանքը, Սիւնեաց թեմի աթոռը, պատմական սրբավայրը, Օրբելեանց տոհմի դամբարանը։ Երբ 1857 թուին երկու քահանայք և Յ. Բաբայեան արձանագրութիւններ էին ժողովում Զալալեան եպիսկոպոսի ճանապարհորդական գրքի համար, նոքա մեծ ջանքով մաքրել են տուել վենատունը ոչխարի հօտի արտահայութիւնից որպէս զի բացուին Օրբելեանց տոհմի տապանաքարերը։

Հէնց իմ ճանապարհորդութեան ժամանակամիջոցում Ամաղուի թուրքերի յանդգնութիւնը մինչև այն աստիճանի էր հասնում, որ երբեմնակի արգելում էին հայ ուխտաւորներին

այդելութիւնը։ Վանքը պահող Առփայեցի Մկրտիչ քահանային չէին թողնում պարապի տակ, որտեղից կանուչելէն ցանելու մի քանի քայլ տարածութեան վերայ, պնդելով որ գետինը իւրեանցն է, իսկ քահանայի հնկողութեանը հնձարկուում են միայն վանքի սեփական պատերը։

Թուրքերի այս անպատասխան վարմունքը տեղիք տուեց ինձ և այն փամանակի տեղական հաշտարար դատաւոր Յարութիւն Սարուխանեանցին անվիջապէս դիմել միասին կալուածատէր Ստեփաննոս Եղիազարեանցի մեծահոգութեանը և խնդրել որ նա սեփականացնի վանքին մի որոշ հողաբաժին վանքի շուրջը։ Պէտք է ասել որ այժմ հանգուցեալ Ս. Եղիազարեանցը յօժարութեամբ ընդունեց մեր խնդիրը և խոստացաւ յատկացնել վանքին նորա շուրջը և առուակի ձորը։

Այս խոստման մասին վանքի տեսուչ Մկրտիչ քահանան դիմեց էջմիածնի Արքազան Սինոդին հաճութիւն և թոյլտուութիւն խնդրելու։ Սինոդը, հրամանագրութեամբ 1877 ամի Նոյեմբերի 22-ից № 2791, յատուկ բերաւ այդպիսի նուիրատուութիւնների մասին եղած օրէնքների յօդուածները, որով գործը շատ և շատ բարդուում էր դժուարութիւններով։ Հարցը մնաց անկատար։

Անտէր, անտիրական մնալով Նորավանքի վեհաստանը շարունակում էր լինել աչխարանոց և ապրանոց և այդ այն շրջանում երբ տեղական գաւառական իշխանութիւնը յաճախակի շրջում և տեսնում էր այդ ապականութիւնը քրիստոնէական տաճարի. տեսնում և լռում էր, կարծես հնութեանց պահպանութիւնը նորանց հոգուից դուրս է. նոյն շրջանում կար և կայ Կովկասեան հնագիտական ընկերութիւն, որի կանոնադրութեան մի յօդուածը պարտաւորացնում է ընկերութեանը պահպանել Կովկասում հնութիւնները . . . .

Ընթերցողը տեսնում է թէ երբեմն հռչակաւոր, հարուստ, լուսաւոր վեհաստանը ինչպէս աստիճանաբար, քայլ առ քայլ մնաեցաւ իւր կրօտեանը, իւր քայքայմանը և որքան մեզ մօտ ժամանակ, այնքան և տրագ։ Թաթարաց, Պարսից, Տաճկաց վա-

զեմի խրոխտ յարձակումներից կարողացաւ դուրս գալ այդ մենաստանը, որպէս զի իւր թշուառ մնացորդները հասցնի մինչև մեր օրերը, ներկայ անհոգ սերնդին։

Որպէս զի գոնէ քարը քարի վերայ պահուի և թուրքերի ապականութիւնից ազատուի այդ մենաստանը, Սրբազան Սինօդն, 1872 թուի Մարտի 27 հրամանագրով տեսուչ նշանակեց վանքի վերայ Առիայ գիւղի ծխատէր քահանայ տէր Մկրտիչ Տէր Մկրտչեանցին, որ իրրև ծխատէր՝ հազիւ կարողանում էր այցելել վանքին միայն կիւրակի օրերը, գարնան և ամառ եղանակին։ Քահանայի օգնականն էր Խաչիկեցի ալեզարդ Անդրէասը։

Վանահայր քահանան ուղիղ վերոյ հեռաւորութեամբ Առիայից յաճախակի չէր կարող այցելել վանքին, բայց յաճախելու ևս կարիք չկար, քանի որ հսկելու բան չկար։ Տէրունէ Անդրէասը գիշեր ցերեկ ջայնակ մնում էր այդ ամայի տեղը, մի անմարդաբնակ խոր ձորի մէջ, որպիսին Նարեկանքի ձորն է, մաքրում էր ժամատունը և եկեղեցին և սպասում էր որ կիւրակի օրը գայ վանահայր քահանան և երկուսը միասին սպասում էին որ և է այցելու։

Չուեռ ժամանակ կարիք և միջոց չկար վանքում մնալու, ուստի վանահայր քահանան նստում էր իւր տանը, իսկ Անդրէասը ամբողջ վանքը յանձնում էր մի փոքրիկ մեռոպէ փականքի արժանի հսկողութեանը՝ ինքը բանալու հետ հանգստանում էր Խաչիկում մինչև գարնան սկիզբը։ Սակայն Մկրտիչ քահանան և Տէրունի Անդրէասը որքան ևս փոքրիկ անձնաւորութիւն լինէին, այնուամենայնիւ մենաստանի վերաբերութեամբ մեծ նշանակութիւն ունէին։ Այցելուն գալով վանքը, գիտէր որ վայրենի տեղ չէր գնում, գիտէր որ այնտեղ կգտնի մարդու նշոյլ, մարդու շունչ։ Այս ևս մի տեսակ մխիթարութիւն էր։

Բայց տապարաղդ վանքի ձեռագրերը այլ կերպ էր տնօրինել։ Մօտ ժամանակում մեռաւ Մկրտիչ քահանան իրրև ծերացեալ մարդ. մեռաւ և Անդրէասը և պատմական զառամեալ մենաստանը նորից մնաց անտէր անտիրական. . . . . ։

Սորանով վերջացնում եմ Ամաղուի Նորավանքի մասին պատմութիւնը։

(Շարունակելի) ՓԱՋԵՐՈՒՆԻ

ԱՋԳԱՅԻՆ

Կիրակի, յունիս ամսոյ 3 ին Ս. Աթոռումս մեծ Հանդիսով տօնուեցաւ Ս. Էջմիածնայ տօնը։ Շաբաթ երեկոյեան Նորին Օծութիւնը նախատօնակին եկեղեցի իջաւ Հանդիսաւոր կերպով։ Բոլոր միաբանք շուրջառագեստք, երկու վարդապետք և երկու սարկաւագունք բուրվառներով, քշոցակիրներ, կերոնակիրներ ու խաչ ու խաչուարակիրներ Հանդիպեցան Նորին Օծութեան Վեհարանի դրան, ուր Վեհափառ Հայրապետը շուրջառ առնելով մտաւ ամպհովանոցատակ և խաչը ձեռին օրհնում էր երկու կողմում խոնուած բազմութիւնը։ Հայրապետի առաջին տանում էին Կաթողիկոսական քօղը, Հովուական գաւազան ու խաչը, չորս բուրվառակիրները կենկարկում էին։ Սրգեցիկ խումբը շարական երգելով առաջնորդեց դէպի եկեղեցին, որ լիքն էր բազմութեամբ։

Հանդիսականք կանգնեցան Իջման սեղանի առաջ, որ լուսաւորուած էր նրան շրջապատող բազմաթիւ կանթեղների և մոմերի լուսով։ Նորին Օծութեան համառօտ մաղթանք կատարելից յետոյ, սկսաւ երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը Իջման սեղանի առաջ։ Երեկոյեան հրավառութիւն էր Տաճարի բակում և խուռն բազմութիւն շրջում էր գեղեցիկ տեսարանով։ Ձեմարանի երգեցիկ խումբը Վեհարանի առաջ կանգնած երգում էր ազգային երգեր։

Մի ևս օր առաւօտեան ժամերգութեան ու Ս. պատարագին նոյնպես ներկայ էր Նորին Օծութիւնը։ Կէս օրին Ս. Աթոռոյս սեղանատանը պատրաստած էր ճոխ հացկերոյթ, հրաւիրուած էին

վաղարշապատի բոլոր պաշտօնատար անձինք և պատուաւորք: Ինքը Նորին Ծ. Էջմիածնի Հայրապետի գմբեթագարդ Աթոռը զարդարած էր գորգերով ու ծաղիկներով: Ճաշի ժամանակ Նորին Ծ. Էջմիածնի բարեմաղթութիւն անելով առաջարկեց Նորին Ս. Էջմիածնի Թագաւոր Կայսեր և բոլոր ընտանեաց կենաց, Ս. Էջմիածնի Հաստատութեան և Հայ ազգի բարօրութեան բաժակները, որոնք դարտակուեցան կեցցէներով. իւրաքանչիւր բաժակի ժամանակ երգեցիկ խումբը երգում էր յարմարաւոր օրհներգ և շարական: Շնորհակալ Կիւրեղ վարդապետ Սրապեանը խօսեց ճառ, որով ցոյց տուեց, որ Ս. Աթոռոյս միաբանութեան վերայ պարտք կայ ազգը սերտութեամբ կապելու Ս. Աթոռի հետ և մաքառելու այն անտարբերութեան դէմ, որ տակաւ առ տակաւ սպրդում է ժողովրդի մէջ:

Սեղանի վերջում Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոսն առաջարկեց Նորին Ծ. Աթոռեան կենաց բաժակը մաղթելով առողջ ու երկար կեանք և յաջողութիւն ձեռնարկութեանց մէջ: Բաժակը կեցցէներով դարտակուեցաւ յոտնկայս:

Երեկոյեան կրկին ճրագալոյց էր Տաճարի բակում և հրախաղութիւնք. երգեցիկ խումբը երգում էր ազգային երգեր: Բազմութիւնը խառն էր: Երկու երեկոյ էլ Տաճարի մեծ կամուրջիկէ խաչը լուսաւորուած էր գոյնզգոյն լապտերներով:

ՀԱՇԻՒ ԵԼԵՒՄՏԻՑ

Հայոց Հեթում բարեգործական ընկերութեան Փիլիպէում, սկսեալ 1 մարտի 1889 թ. մինչ յունվարի 1890 թ.

ՄՈՒՏՔ.

Ընդհանուր գործառնից ճոպան է՝

1)	Տոկոսաբեր արժէտոմսեր ի գումարի . . .	10268 40
2)	Ընթացիկ հաշիւ առևտրական բանկում . . .	1958 68

3)	Առձեռն գանձարանում	373	40
		12600	84
	Սոյն տարի ստացել է՝		
1)	Նուիրաբերութիւններ՝		
	Բագուաբնակ Եղիսաբէթ Սարգսեանից ի յիշատակ Հան գուցեալ իւր ամուսնոյ	400	
	Տ. Դարեհ՝ Յովհաննէսեանից ի յիշատակ վաղամեռիկ իւր որդւոյ	25	
	Անյայտ անձինքներից	48	50
2)	161 իսկական անդամներից	966	
	6 մշտական անդամներից	600	
3)	Պարահանդէսից վիճակախաղով	821	58
	Ներկայացումից	700	25
	Պ. Բարայեանցի դասախօսութիւնից . . .	42	
4)	Տոկոսիք ընթացիկ հաշուից	59	33
	» արժէտոմսերից	611	
5)	Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի աշակերտուհիներից ուսումնական պիտոյքների վճար	92	
	Նոյն եկեղեցւոյ երեցփոխանից . . .	25	
6)	Կարուձևի դպրոցի արդիւնք	610	88
	Գումար	5001	54
	Բոլորը . .	17602	28

Ել.

1)	Դիւանական և մանր ծախսեր	113	89
2)	Նուիրատուութիւնք՝		
	Ցօգուտ չքաւոր ուսանողաց ուսման վճար . .	18	
	» Ջրկենեանց եկեղեցւոյ ուսումնարանի . .	50	
	» Նորաշէնի եկեղեցւոյ ուսումնարանի . .	30	
	Զբօրհնէքին և զատկին բաժանուեցաւ չքաւոր անձանց և ընտանեաց	200	
3)	Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի պահպանութիւնը . .	2048	58
4)	Սոյն դպրոցի շինութեան նորոգութիւնը . . .	136	70
5)	Կարուձևի դպրոցի պահպանութիւնը . . .	1660	19
6)	Թիֆլիսի դատաստանական պալատի վճռով վճարուեցաւ Սերեբրէկեանի կտակաւոր գումարից . .	68	
	Գումար	4345	

Ընկերութիւնն ունի՝		
Տոկոսաբեր արժէտոմսեր	10458	84
Ընթացիկ հաշիւ առևտրական բանկում . . .	2497	33
Առձեռն գանձարանում	300	75
Բոլորը	17602	28

Բացի սորանից երեք հատ օսմանեան արծաթոյ դրամ, դպրոցական կահկարասիք և այլ իրեր։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ Ք

ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ Վ. ԵՀՎԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԴԻՍ.

Երջաբերական կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 28 ապրիլի յանուն Թեմական Առաջնորդաց Հայոց Ռուսաստանի, որով պատուիրէ ազգ առնել ամենայն վարչութեանց եկեղեցական—ծխական ուսումնարանաց Հայոց Թէ՝ ի վերայ կրօնական ուղղութեան ուսումնարանաց այնոցիկ տեղեաց, յորոց Հեռի է Փոխանորդն, պարտաւոր են հսկել գործակալ քահանայք, ստանձնելով զայն ամենայն պարտաւորութիւնս և իրաւունս, զոր տրամադրէ 17-րդ յօդուածն կանոնաց եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հայոց վերաբերութեամբ փոխանորդաց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս յ2ն մայիսի ընդ համար 182, որով ընդարձակէ զիրաւունս Գեր. Փոխանորդի Թեմակալին Հայոց Երևանայ բանալ ի Փոռ և յՈւզուն—Քիլիսա գիւղօրայս զեկեղեցական—ծխական միդասեան ուսումնարանս տղայոց, հաստատելով ի պաշտօն Հոգաբարձութեան վանն առաջնոյն՝ զբարեկրօն Պօղոս քահանայն Տէր Ստեփանեան, զերեցփոխան եկեղեցւոյ տեղւոյն և զյարգելի Աւետիս Մխրզիզեանց և անձնափոխանորդ՝ պատուելի Յարութիւնն Բաբադիւզեանց. իսկ վանն երկրորդի՝ զբարեկրօն Յարութիւն քահանայն Տէր Կարապետեան, զերեցփոխան

եկեղեցւոյ տեղւոյն և գլխաւորելի Սմբատն Մալխասեանց և անձնափոխանորդ՝ զպատուելի Մարտիրոսն Գրիգորեան:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի նոյն թիւ և ի նոյն համար, որով հաստատէ ի պաշտօն հոգաբարձութեան վասն եկեղեցական-ծխական միջասեան տղայոց ուսումնարանին Հայոց Տաշբուռունն զեղջ գլխաւորն Անդրէաս քահանայի Խօդոյեան՝ զեբեդիոսան եկեղեցւոյ տեղւոյն և գլխաւորելի Գրիգորն Ծերունեան և անձնափոխանորդ՝ զպատուելի Սիմէոնն Մուրատեան:

—

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ի 10 մայիսի ընդ համարաւ 190՝ յանուն Գերապատիւ վանահօր վանից սրբոյն Յովհաննու Իչ-քիլիսէ կոչեցելոյ, որով շնորհէ նմա գպնակէ եպիսկոպոսական վան սրբութեամբ պաշտելոյ նորա գկոչումն իւր Առաքելական և անձնուէր ծառայութեանցն Հայաստանեայց եկեղեցւոյ և հոգևոր որդւոց նորա և գաւակաց, որով գրաւեալ է առ ինքն զքազցր ուշադրութիւն կրօնական և ազգային վարչութեանց Հայոց, որ ի Թուրքիա:

—

Կոնդակ վեհափառ Հայրապետի ազգիս ի 26 մայիսի ընդ համարաւ 206՝ յանուն Գերապատիւ Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի Սրբազան Մամբրէ եպիսկոպոսի, որով համաձայն ցանկութեան Նորին հաստատէ ի պաշտօն Թեմական Տեսչի եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հայոց յիշեալ վիճակի՝ զբարեկրօն Եղիշէ քահանայի Գեղամեանց Բադու քաղաքի:

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 27 մայիսի ընդ համարաւ 207՝ յանուն յարգելի բժիշկ Լեւոնի Տիգրանեանց, որով յայտնելով զսրտագին ցաւակցութիւն իւր ընդ մահ բարեյիշատակ Մկրտչի Սանասարեանց՝ Թոյլատրէ ամփոփել գդի հանգուցելոյն ի պարսպի Վանայ աւագ եկեղեցւոյն Հայոց Տփխաց:

—

Ներջաբերական Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգին յ30 մայիսի ընդ համարաւ 211՝ յանուն թեմական առաջնորդաց Հայոց Ուսասատանի, որով՝ վասն բարեկարգելոյ գթեմական դպրանոցս ըստ ուսումնական մասին, պատուիրէ յետ հարցաքննութեանց՝ արձակել համարել ի պաշտօնէ գամենայն ուսուցիչս յիշեալ դպրանոցաց և յետ այնորիկ՝ յընտրութեան նորոց ուսուցչաց վարել ըստ հետևելոցն—Նախ ի պաշտօն ուսուցչի ընտրել զանձինս հմուտս ի գիտութեան, բարեբարոյս և ջերմեռանդս ի կրօնի, նուիրեալս միանգամայն գործոյ և եթ դաստիարակութեան մանկանց. երկրորդ՝ յուսուցչութիւն թեմական դպրանոցաց հրաւիրել զանձինս, որք աւարտեալք են գընթացս ուսման ի բարձրագոյն ուսումնարանս և ի մանաւանդ բժշկի Հոգ. ձեմարանի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի՝ և երրորդ՝ յետ ընտրութեան ուսուցչացն՝ զանազանական ցուցակ նոցին մատուցանել ի նկատողութիւն և ի վախճանական տնօրինութիւն Նորին Սրբութեան՝ հանդերձ պարզաբանութեամբ ամենայն հանգամանացն ևս և ցուցմամբ յականէ յանուանէ արժանեաց իւրաքանչիւրոցն ընտրելոց, թուոց դասուց և առարկայից և քանակութեան տարեկան թոշակաց նոցին:

ՓԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

21 մայիս. 1882 թուից սկսած՝ Փութայիսի արժանապատիւ Դաւիթ Սւազ քահանայ Նարալեանցը տարեկան նուիրում էր եբեսուն (30) րուբլի Մայր Աթոռիս ձեմարանին: Այժմ մահամերձ հիւանդութիւնից ապաքինուելով՝ ինքնաբերաբար խոստանում է գրաւոր՝ իւրաքանչիւր տարի փոխանակ երեսունի՝ վաթսուն րուբլի նուիրել ցմահ, իսկ իւր մահից յետոյ կտակել Մայր Աթոռիս մի գումար, որից տոկոս ստացուի մշտապէս վաթսուն րուբլի տարեկան, ի նպաստ ձեմարանի: Բացի այս դրամական նուէրից խոստանում է մահից յետոյ իւր Հարուստ մատենադարանն էլ նուիրել Մայր Աթոռիս:

---

25 մայիս. Բագուայ Մարդասիրական ընկերութեան խորհրդի խնդրանաց համաձայն Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց քարոզիչ նշանակել Շամախու թեմին՝ Արժան. Կիւրեղ վարդապետ Սրապեանցին, որ արդէն ուղևորուեցաւ իւր նոր պաշտօնատեղին:

—

21 մայիս. Ագուլեցի Ա. կարգի վաճառական Մարգար Յարութիւնեան Փանեանցի պսակը իւր սանամայր՝ այրի Սոնայ Հախպատելեանցի հետ Ս. Սինօդը հրատարակում է անվաւեր, որովհետև Մարգար Փանեանցը տիկին Հախպատելեանցի որդու կնքահայրն է եղել: Այս պսակը կատարուել է առանց թոյլտուութեան Հոգևոր Իշխանութեան Ջարուանսարայ գիւղում: Իբրև մանակից այս ապօրինութեան ենթարկւում են պատժի Թիֆլիսի Ներսէս քահանայ Աբովեանցը՝ իսպառ արձակուելով Կոնսիստորիայի անդամակցութիւնից, Ղազախի գործակալ Յակովբ քահանայ Գաբրիէլեանցը արձակւում է գործակալութիւնից. պսակադիր Մեսրովբ քահանայ Նդիլեանցը ենթարկւում է 150 րուբլի տուգանքի յօգուտ ձեմարանի, Կոմիտաս քահանայ Սիմէօնեանցը 100 րուբլի տուգանքի յօգուտ ձեմարանի. Ղուկաս քահանայ Սիմէօնեանցը դադարեցւում է քահանայագործութիւնից անորոշ ժամանակով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ.

Երևանի Հայոց թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը համաձայն Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց Կաթողիկոսի, 30-ն անցեալ մայիսի № 212 կոնդակի, հրաւիրում է դպրանոցում աւանդելի բոլոր առարկաների համար ուսուցիչներ, որոնք պէտք է աւարտած լինին բարձրագոյն ուսումնարաններում կամ Սուրբ Էջմիածնի ձեմարանի մանաւանդ բաժնում, իսկ եթէ այդպիսիները չգտնուին, դպրանոցի առարկաների դասաւանդութեան մէջ բազմամեայ փորձառութեամբ հարկաւոր հմտութիւնը ձեռք բերած ուսուցիչներ: Դասերի վարձ նշանակուած է՝ բարձրագոյն դպրոցներում աւարտածներին դասական չիսուն րուբլի, իսկ միւս-

ներին երեսուն: Գծագրութեան, նկարչութեան, գեղագրութեան և ձայնագրութեան դասերին 25ական րուբլի: Իւրաքանչիւր ուսուցիչ կարող է ունենալ շաբաթական 16—24 դաս: Հրաւիրուում են երկու երկրորդ նախակրթարանների համար երկու ուսուցիչ, օրական չորս դասով, տարեկան 500 րուբլիով, իսկ առաջին նախակրթարանների համար նոյնպէս երկու ուսուցիչ օրական երեք դասով, տարեկան 400 րուբլիով: Յանկացողները կարող են դիմել հոգաբարձութեանը, ներկայացնելով ուսման վկայականներն և ծառայութեան ցուցակները, մինչև յուլիսի 25ն:

Երևանայ Հայոց թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը հրաւիրում է դպրանոցի համար տեսուչ որ պիտի լինի ուսումնասիրատ բարձրագոյն դպրոցներում: Յանկացողները կարող են դիմել հոգաբարձութեանը մինչև յուլիսի 25ն ներկայացնելով ուսման վկայական և ծառայութեան ցուցակ: Տեսչի ռոճիկ սահմանուած է բացի դասերից տարեկան 1200 րուբլի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ընդհանուր Կանոնադրութեան Հոգևոր Ժողովոյ Մայրանի Սուրբ Էջմիածնայ, ուսումնասիրաբար ի Թեմական Հոգևոր Դպրոցս ի կայ ին մնանել յառաջին Վարձատրեամբ, պարտաւորեալ գոլով ենթարկիլ քննութեան՝ յառարկայս կարևոր դատելս ի կողմանէ Ուսումնական խորհրդոյ Ժամարանի, Խորհուրդն որոշեաց ծանուցանել ի գիտութիւն Տեսչութեանց և աւարտողաց ի Թեմական Հոգևոր Դպրոցս թէ՝ կարևոր առարկայք յորս ունին քննիլ ցանկացողք ի մնանել յառաջին Վարձատրեամբ, հետևեալքն են.

Կրօն
1, Եկեղեցական Պատմութիւն Հայոց, ընդարձակ։
2, Քրիստոնէական Վարդապետութիւն Հայ Եկեղեցւոյ, ընդարձակ։
3, Սրբազան պատմութիւն Հին և Նոր Կտակարանի, ընդարձակ։
4, Ծանօթութիւն Աւետարանացն Ղուկասու, Յովհաննու և Գործոց Առաքելոց։

Լեզուք
1, Հայոց լեզու, գրաբառ շարադրութիւն. } Նիւթք ըստ դպրոցական ծրագրի։
2, Ռուսաց լեզու, շարադրութիւն. } Նիւթք ըստ դպրոցական ծրագրի։
3, Ֆրանսերէն լեզու, թարգմանութիւն։ } Նիւթք ըստ դպրոցական ծրագրի։

Հրդեհիկ առարկայք նշանակեալ են վասն այնոցիկ, որք առացեալ գոլով զվկայական աւարտման դպրոցական ընթացից՝ ցանկան մտանել ի Վեմարան մինչեւ անցեալ իցէ առաւել քան զամ մի ի թուականէ առացմանն վկայականի. իսկ եթէ առաւել քան զամ մի անցեալ իցէ ի վերայ, յայնժամ ունին քննիլ յամենայն առարկայս դպրոցական ընթացից, համաձայն Հրդ յօդուածոյ Ծանուցման Վարչութեանս։

ՏԵՍՈՒՉ ՀԵՄԱՐԱՆԻ ՆՈՒՀԱՊԵՏ ՍԲՆՂԱՑ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐՉՈՒԹԵՆԷ ՀԵՄԱՐԱՆԻ

1. *Ընտութիւնք ընդունելութեան յաշակերտութիւն Վեմարանի Այր Ընթռոյս Սրբոյ Էջմիածնի կատարին մի անգամ և եթէ ի տարւոջ և այն աւուրքք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ։*

2· Յանկացողք մնանել յաշակերտութիւն Ա՛եմարանիս մատուցին խնդիր յանուն Վեհափառ Կաթուղիկոսին, ոչ անապան քան զմին Օգոստոս ամսոյ:

3· Ընդ խնդրագրին պարտէ առաջի առնել զվկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի:

4· Նորեկ աշակերտք և ուսանողք գնային ի բժիշկ Ա՛եմարանին, որ և տայ Տեսչին զդրաւոր տեղեկութիւն գառողջութենէ նոցա:

5· Ի դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսեալքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առանձին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան Ա՛եմարանիս՝ նորքա միայն, որք ունին վկայագիր աւարտման դպրոցական դասընթացից:

6· Յետ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս Ա՛եմարանիս· իսկ վասն մնանելոյ յԱռաջին լսարան՝ ենթարկեսցին հարցաքննութեան յայն յամենայն առարկայս՝ զորս կարևոր համարիցի Ուսումնական խորհուրդն:

Ծանօթութիւն· Վասն մնանելոյ յԳ· դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից եփեսեան եկեղեցական-ծխական ուսումնարանաց· իսկ վասն մնանելոյ ի միւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Վեհափառ Կաթուղիկոսէն, ի պետս ընթացից:

7· Յանկացողք մնանել յառաջին լսարան Ա՛եմարանիս վկայագրով աւարտման դպրոցական դասընթացից, վերատին ունին ենթարկիլ հարցաքննութեան յամենայն առարկայս, եթէ չինչ ա-պրպտանն անցեալ էջն ի վերայ առա-ել փան պահ մի:

8· Յետ հարցաքննութեան ընկալեալ լեցին ի շարս աշակերտաց՝ որք արժանաւոր դատիցին յԱռ-

սումնական խորհրդոյն։

Ծանօթութիւն. *Պահանջի դէպ ընկալեալքն յաշակերտութիւն լեցին ուշիմք, երկարոդիք, փափկաձայնք, բարեկազմք և բարեբարոյք։*

9. *ՅԿ. դասարան Ղեմարանին ընկալեալ լեցին պատանիք 14—16 ամեայ, և ըստ այմ համեմատութեան ի յաջորդ դասարանս։*

10. *Ընդհակառակ Ղեմարանի դիշերօթիկք են ամենեքեան, թէ հրիտարժքն և թէ թոշակաւորքն, որք ստանան զուսումն, սնունդ, հագուստ և զամենայն առողջապահական խնամս։*

11. *Թիւ հրիտարժից, որ ի հաշիւ Մայր Ընթոռոյս, որոշի ամ ըստ ամէ, ըստ բարեհաճ կարգադրութեան Վեհափառ Կաթուղիկոսի։*

12. *Ընդհակառակ պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ յայսկոյս կովկասեանք 50 րուբլիս, իսկ եկեալքն յայլոց վիճակաց Ռուսաստանի կամ ի տար աշխարհաց՝ րուբլիս 75, որպէս զի հատուսցի այդ ի ծախս վերադարձի նոցա ի հայրենիս, և ի գին կօրուսեալ և վատնեալ գրենոյ, հանդերձեղենաց և այլոց իրեղենաց։*

13. *Ուրաքանչիւր թոշակաւոր վճարեսցէ ի տարին րուբլիս 200, ի կրկին նուագս. ի Սեպտեմբեր և ի Յունվար ամիսս։*

14. *Եթէ թոշակաւոր ոք ելցէ կամ արձակիցի մինչև զկատարել ուսումնական կիսամեկին, թոշակ նորա ոչ դարձուսցի յետս։*

15. *Յամառնային արձակուրդս, եթէ ծնօղք կամ բարերարք կամիցին տանել զորդիս իւրեանց ի հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լեցին ի ծնողաց կամ ի բարերարաց։*

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։

Հնութիւնք Հայրենեաց	—	20
Հռովմէական եկեղեցի	—	80
Հանդէս բացման Ճեմարանի	—	10
Հրահանգ քերականութեան	—	25
Հրահանգ աւագ քահանայից	—	10
Հրահանգ վասն թեմական տեսչաց	—	10
Ձայն բազմաց	—	50
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ծամագրոց	4	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	2	—
Ձայնագրեալ չարականաց	60	
Ճանապարհորդութիւն Հակստհաուզէնի	—	80
Ճաշոց	60	—
Մաղթանք վասն Հայրապետի ազգիս	—	20
Մաշտոց Ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Յաւելուած Ծամագրոց Ձայնագրեալ	—	20
Նախակրթանք. Բ. մասն	—	20
Նոյն Գ. մասն	—	20
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	
Պատմութիւն Ժողովոց Հայաստանեաց եկեղեցւոյ	—	20
Պատմութիւն Խաչակրաց	—	20
Պատմութիւն Հայոց Լիհաստանի	—	20
Պատմութիւն Հռոմոսի Վանուց ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ	2	—
Պատկերասէր պատկերատեաց	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէօն Կաթուղիկոսի)	—	50
Սաղմոս Դաւթի	—	50
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	20
Տեղեկագիր Ճեմարանի 1881—82·	—	10
Նոյն 1882—83	—	10
Փնար Մշեցւոց և Վանեցւոց	—	20
Օրացոյց (1890)	—	20
* Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Ասոնցմէ նշանք հրատարակուած են ուրիշ տեղեր։

20 րուբլուց աւելի գնողին եւ կանխիկ վճարողին զեղջուխն կը լինի 20°/₀ին ճանապարհածախքը գնողի վերայ)։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ըստ Բարձր հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց պատուիրի ամենից ուսուցչաց և ուսուցչուհեաց հոգեղեցական–ծխական ուսումնարանաց Հայոց՝ զի որք ընդ իշխանութեանց իւրեանց յանուն Վեհափառ Հայրապետի չեն մատուցեալ զվկայականս ուսման իւրեանց յանցելոյս ամի և կամ ստացեալ են յետոյ՝ ի դէպս կարևորութեան այնոցիկ զմաւերացեալ պատճէնս նոցին պահեսցեն առ ինքեանս՝ իսկ զիսկականն անշուշտ փութասցեն մատուցանել Նորին Սրբութեան ընդ ձեռն թեմական Առաջնորդաց ց 1 յառաջագայ յունվարի՝ նոյնպէս արասցեն և նոքա՝ որք յայսմհետէ ցանկասցեն ի ձեռս բերել զիրաւունս ուսուցչութեան հոգեղեցական–ծխական ուսումնարանս Հայոց։

Մանուկի տակից դուրս եկաւ «Ձայնքարդ Շարականը» և Յուսիկ Վ. Մովսէսեանցի «Դասատետր Կրօնի» Ա. Բ. և Գ. տարիները։

Յանկացողները կարող են դիմել Տպարանական ժողովին ի Ս. Էջմիածին. Въ Эчміадзинскій типографическій Комитетъ, въ Вагаршапатъ.